

ՊԼԵՆՊԵԼԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԿՐԹԱԾՐՁԱՆ

223 North Jackson St., Glendale, California 91206-4380

Հեռախոս՝ 818-21-3111, ներքին համար՝ 1209

Հարգեր և պատասխաններ «Անվտանգությունը դարոցում» ծրագրի վերաբերյալ ժողովներից

Անվտանգությունը դարոցում ծրագրի վերաբերյալ ժողով

Քրեանթա Վալեյ ավագ դարոց

2018թ. մարտի 13

Հարց - Ես իսկապես կարծում եմ, որ Ֆլորիդայում տեղի ունեցած կրակոցներից հնարավոր էր խուսափել: Կարծում եմ՝ համակարգը չաշխատեց: Ինչու՞ այն չաշխատեց: Որքանո՞վ համոզված կարող ենք լինել, որ այն չի ձախողվի կրկին (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Որևէ երաշխիք չկա, որ սա չի կրկնվի: GUSD-ն ուսումնասիրում է իր «համակարգը», որպեսզի երաշխավորի, որ կրթաշրջանը տեղեկացված որոշումներ է կայացնում՝ անվտանգության միջոցներն ուժեղացնելու համար՝ հիմնվելով այս նախկին դեպքերից քաղված դասերի վրա:

Հարց – Այս ժողովը Փարքլանդի դեպքերից հետո է նախաձեռնվե՞լ (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – GUSD-ի աշակերտների և աշխատակիցների անվտանգությունը առաջնային է մեզ համար, սակայն Փարքլանդի կրակոցներից հետո մեր անձնակազմը բազմաթիվ հարցեր է ստանում այն մասին, թե ինչպես է GUSD-ն ապահովում իր աշակերտների անվտանգությունը: Հետևաբար, կարելի է ասել, որ այս ժողովը անմիջական կապ ունի Փարքլանդի կրակոցների հետ, որպեսզի կարողանանք հավաքվել միասին և սկսենք պատասխանել ծնողների/խնամակալների հարցերին և մտահոգություններին:

Հարց – Փարքլանդի ուսուցիչներից մեկը լրատվամիջոցներում հարձակման է ենթարկվել՝ ընթացակարգին հետևելու համար, իսկ դեկլարությունը մեծ աջակցություն չցուցաբերեց նրան: Ինչպե՞ս է GUSD-ն պաշտպանում իր ուսուցիչներին նման դեպքերում, երբ նրանք հետևում են lockdown երևույթի ընթացակարգին, երբ դրսևորում են «in loco parentis» դիրքորոշումը (ծնողի կարգավիճակ): Այս դեպքում աջակցու՞մ եք ուսուցիչներին, երբ նրանք աշակերտներին պաշտպանելու համար այդ որոշումներն են կայացնում: Ուսուցիչները, ովքեր հետագա ամոթի զգացողությունից խուսափելու համար, կգուշակեն, թե ինչ անեն, չեն կարող արդյունավետ, անվտանգ որոշումներ կայացնել (3/13/2018թ. ժողով):

Պատասխան - Շատ ցավալի է, որ Փարքլանդի որևէ ուսուցիչ կարող է քննադատության ենթարկվել: Յուրաքանչյուր ուսուցիչ փորձում է հնարավոր լավագույն որոշումը կայացնել ճգնաժամային իրավիճակներում: GUSD-ն աջակցում է ուսուցիչներին՝ տրամադրելով նրանց վերապատրաստման դասընթացներ «Վազիր, թաքնվիր, կռվիր» թեմայով կրակոցների ժամանակ, սակայն վերջին հաշվով յուրաքանչյուր ուսուցիչ և անձնակազմի անդամ այդ պահին իրենք են որոշում կայացնում: Չկա որևէ եզակի ընթացակարգ, որը պատշաճ ձևով կնախապատրաստի ուսուցիչներին և անձնակազմի անդամներին արձագանքել յուրաքանչյուր արտակարգ դրության իրավիճակին:

Հարց - Որոշ իրավիճակներում դուռը ներսի կողմից փակոցներով փակելը փրկել է երեխաներին որոշ դպրոցներում: Ես հասկանում եմ, որ ոչ բոլոր դռներն են բացվում դեպի ներս: Ի՞նչ է արվում այդ կապակցությամբ (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Շենքերի հարցերով զբաղվող անձնակազմը ավարտում է անվտանգությանն առնչվող գործողությունները դպրոցի տարածքում, որի արդյունքում պարզ կլինի, թե ինչ սարքավորումներ են անհրաժեշտ յուրաքանչյուր դասարանի համար: Սա նաև ներառում է «lock-blocks»-ը, որպեսզի դասարանի դռները մշտապես կարողանան փակ լինեն, սակայն օգտագործելիս բաց լինեն: Արտակարգ իրավիճակի պարագայում, դռները հնարավոր է փակել ներսից, որպեսզի հնարավոր չլինի բացել այն: Շատ կարևոր է, որպեսզի հնարավոր լինի արագ փակել դռները և հնարավորություն չտալ կրակողին ներս մտնել դասարան և ներսի կողմից փակել այն հնարավոր գոհերով: Այդ դեպքերում, իրավապահ մարմինները պետք է կարողանան արագ և արդյունավետ կերպով ներս մտնել դասարան: «Վազիր, թաքնվիր, կովիր» թեմայով վերապատրաստման դասընթացների ժամանակ ուսուցիչները տեղեկանում են, որ պետք է օգտագործեն դասարանի կահույքը՝ դռները շրջափակելու համար, որպեսզի դանդաղեցնեն կրակողների գործողությունները: Փակ դուռը և դռան հետևի ֆիզիկական պատնեշները լրացուցիչ մի քանի բույսեր կտան իրավապահ մարմիններին ժամանելու համար:

Հարց – Ինչպե՞ս եք ապահովում երեխաների ապահովությունը, երբ նրանք դասարանում չեն. երբ առավոտյան դասի են գալիս, երբ գնում են ճաշելու կամ երբ տուն պետք է գնան (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Այս իրավիճակներում ամենից արդյունավետ ձևն այն է, որ դպրոցի անձնակազմը, ծնողները և հնարավորության դեպքում աշակերտները ուշադիր գնեն իրենց շրջակայքը, որպեսզի կարողանան տեսնել, թե ինչն է տարօրինակ թվում և ապա տեղեկացնեն այդ մասին դպրոցին:

Հարց – Ի՞նչ իրավական աղբյուրներ կան այն մարդկանց համար, ովքեր ահաբեկումներ են տարածում սոցիալական ցանցերում (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Ահաբեկման յուրաքանչյուր դեպք հետաքննվում է Կրթաշրջանի և դպրոցի անձնակազմի կողմից՝ անհրաժեշտության դեպքում իրավապահ մարմինների աջակցությամբ: Գլենդելի ոստիկանությունը և քաղաքացիական շերիֆները այցելել են աշակերտների տներ օրվա և գիշերվա բոլոր ժամերին, երբ անհրաժեշտություն է լինում հետևել բոլոր տեսակի ահաբեկումներին: Որոշ համայնքներ նախատեսում են տուգանել այն ընտանիքներին, որոնց երեխաները սոցիալական ցանցերում ահաբեկումներ կտեղադրեն: GUSD-ն կարող է կիրառել իր ընթացիկ քաղաքականությունը աշակերտների հանդեպ, ովքեր պետք է բախվեն այն հետևանքներին, որ առաջացել են ուսումնական օրը խանգարելու համար, անգամ, եթե այդ ահաբեկումները տեղադրված են եղել համացանցում:

Հարց – Կարող եք մի փոքր ավել պատմել, թե ինչպես կարող են դրական հարաբերությունները ընդհանուր առմամբ օգնել դպրոցի անվտանգությանը: Ինչպե՞ս կարող ենք ավելի շատ մեծահասակներ ավելացնել դպրոցում, ովքեր կլինեն լավ խորհրդատուներ (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Դրական հարաբերությունները ընդհանուր առմամբ կարող են օգնել դպրոցին տարբեր կերպ: Աշակերտները, ովքեր կապված են իրենց մասին հոգ տանող մեծահասակի կամ դասընկերների աջակցող խումբ ունեն, քիչ հավանականություն ունեն մեկուսանալու և իրենց կամ

ուրիշների հանդեպ վտանգ չեն ներկայացնում: Այս դրական հարաբերությունները դրական կարեկցանք է առաջացնում մյուսների մոտ, որը կարևոր մասնիկ է և չկա դպրոցում կրակոցներ իրականացնողների մոտ, ովքեր «նվաստացնում են» իրենց հավանական զոհերին, որպեսզի վնասեն իրենց: Դրական հարաբերությունները նաև մեծացնում են հավանականությունը, որ վստահություն ունեցող մեծահասակին կտեղեկացվի, եթե աշակերտը մտադիր է ներգրավվել հնարավոր ինքնավնասման մեջ կամ մտքեր ունի վնասել ուրիշներին: Դրական հարաբերությունները կարևոր են աշակերտների և ուսուցիչների, աշակերտների և դպրոցի անձնակազմի, աշակերտների և աշակերտների միջև: Եթե որևէ մեկը հետաքրքրված է դպրոցում կամավոր կամ խորհրդատու լինել, ապա կարող է անմիջական կապ հաստատել իր դպրոցի տնօրենի հետ:

Հարց – Կարո՞ղ եք մի փոքր ավել պատմել, թե ինչ է «Երկրորդ քայլ – սոցիալ գգացմունքային սովորել» ծրագիրը (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – «Երկրորդ քայլ» փաստերի վրա հիմնված սոցիալ-գգացմունքային ուսումնական ծրագրի օրինակներից մեկն է, որը նախատեսված է օգնելու աշակերտներին ավելի լավ կառավարեն իրենց գգացմունքները և ստեղծեն դրական հարաբերություններ, որ բոլոր աշակերտները սովորելու համար լավ հնարավորություններ ունենան: Այն դասընթացների և ծրագրերի շարք է, որն օգնում է աշակերտներին կառուցել սոցիալ-գգացմունքային հմտություններ, K-8, կենտրոնանալով՝ սովորելու, հոգատարության, գգացմունքների կառավարման, խնդիրներ լուծելու, մտածելակերպի և նպատակների, արժեքների ու ընկերության, գաղափարների, գգացմունքների և որոշումների և դասընկերների հետ ընդհարումների հմտությունները:

Հարց – Իսկ ի՞նչ կասեք MART-ի նման մեխանիզմի կիրառման մասին, որն աջակցում է հոգեկան առողջության և անվտանգության վերաբերյալ հարցերին դպրոցներում (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – GUSD-ն ծանոթ չէ այս հապավմանը: Խնդրում ենք էլ. նամակ ուղարկել դոկտոր Քեյլի Քինգին հավելյալ տեղեկություններով՝ kking@gusd.net հասցեով, որպեսզի կարողանանք հետամուտ լինել ձեր առաջարկին:

Հարց – Կարո՞ղ եք ավելին ասել, թե ինչպես սոցիալական աշխատողները, հոգեբանները և խորհրդատուները կարող են օգնել աշակերտների անվտանգության հարցում: Չե՞ք կարծում, որ հոգեկան առողջության հարցերով զբաղվող մասնագետները կարող են օգնել անվտանգության հարցերով (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Սոցիալական աշխատողները, հոգեբաններն ու խորհրդատուները ավելացնում են աշակերտների անվտանգությունը՝ հնարավորություն տալով դպրոցի անձնակազմին անմիջականորեն արձագանքելու այն աշակերտներին աջակցելուն, ովքեր իրենց կամ ուրիշներին վնասելու վտանգի առաջ են կանգնած: GUSD-ն ջանասիրաբար աշխատում է այս տեսակի աջակցությունն ավելացնելու վրա: Այս աշխատանքի օրինակներից մեկը հոգեբանական խորհրդակցությունների և սոցիալական աշխատանքի պրակտիկանտ ուսանողների թվի ավելացումն է ամբողջ կրթաշրջանում: Նրանք ուղղակիորեն աշխատում են աշակերտների հետ՝ իրենց կարիքները բավարարելու համար:

Հարց – Կարող եք ավելացնել հոգեկան առողջության վերաբերյալ ֆորմ, բժշկական և պատվաստումների ֆորմերի հետ միասին, որը պետք է լրացվի երեխայի ուսուցչի կողմից: Եթե

Բժիշկը չկարողանա գնահատել աշակերտի խնդիրը, ապա պետք է հոգեբանը ներգրավվի և թույլտվություն տա առ այն, որ աշակերտը կարող է գտնվել դպրոցում: Սա կարելի է անել յուրաքանչյուր տարի, ինչպես որ անում ենք բժշկական թղթերի հետ (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Օրենքով դպրոցները պարտավորվում են որոշ բժշկական տեղեկություններ պահանջել, ինչպես օրինակ 1-ին դասարանի ֆիզիկական քննությունն է և պատվաստումների գեկույցը, սակայն դրանք չեն պահանջվում յուրաքանչյուր տարի: Հոգական առողջության մասին քննությունները չեն պահանջվում դպրոց ընդունվելու համար: Բժիշկը կամ հոգեբանը, ով երեխայի հետ կարճ քննություն է անցկացնում, չի կարող այդ ընթացքում ախտորոշել աշակերտի հոգեկան առողջության կարիքները:

Հարց – Մենք գիտենք, թե ինչն է ազդում դպրոցներում բռնության կանխման վրա: Քոլումբայնի դեպքերից սկսած՝ մենք փորձում ենք հասկանալ դպրոցի միջավայրը և կապը մեծահասակների հետ: Այս գործողության մասին ավելի հստակ կարող էք տեղեկանալ “Interdisciplinary Group on Preventing School and Community Violence” փաստաթղթից: Չնայած բռնությունը հավասարապես հոգեկան հիվանդության պատճառով չէ առաջանում, NAMI-ի հոգական հիվանդության առաջին օգնության ծրագիրը հիանալի աղբյուր է դրա համար (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Շնորհակալություն NAMI հոգեկան առողջության առաջին օգնության ծրագրի մասին տեղեկացնելու համար:

Հարց – Քանի որ կարևոր է ավելի ամուր կապ հաստատել աշակերտների հետ, արդյոք աշակերտ/խորհրդատու հարաբերակցության նվազումը տարբերակ է:

Պատասխան – Այո: Այս հարցը քննարկվում է կրթաշրջանի տեղական կառավարման և պատասխատվության ծրագրի (LCAP) մշակման շրջանակներում և արդյունքում ավելացվել են հոգեկան առողջության խորհրդատուների և խորհրդատուների ու սոցիալական աշխատանքի պրակտիկանտ ուսանողների քանակը կրթաշրջանում: Անձնակազմի ավելացման մասին որոշումը կախված է ֆինանսավորումից:

Հարց – Նախատեսու՞մ եք անվտանգության աշխատողներ ունենալ տարրական դպրոցներում (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Այս պահին դա չենք նախատեսում: Նահանգի օրենսդրությունը նախատեսում է դպրոցներում հատուկ անձնակազմ (resource officers) և զինված աշխատակիցներ ունենալ, սակայն այս օրինագծի համար դեռևս չեն քվեարկել կամ ֆինանսավորում չի հատկացվել դրան: AB 2067-ը ներկայացվել է ասամբլեայի անդամ Գալագերին քննարկման համար:

Հարց – Արդյո՞ք SRO-ն սպասարկում է ամբողջ դպրոցի շենքը, թե՞ լրացուցիչ աջակցություն էլ կա (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Դպրոցի resource officer-ներին աջակցում են անվտանգություն աշխատակիցները և անձնակազմի այլ անդամներ՝ ներառյալ դպրոցի ղեկավարները, ովքեր լրացուցիչ վերահսկողություն են տրամադրում:

Հարց – Երբ կարող ենք ակնկալել, որ դպրոցների բոլոր ուսուցիչները/անձնակազմի անդամները վերապատրաստվել ակտիվ կրակոցների իրավիճակում (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – 2018թ. փետրվարի 26 – 2018թ. մարտի 26 Գլենդելի ոստիկանության բաժանմունքը 17 դպրոցներին տրամադրել է «Run, Hide, Fight» վերապատրաստման ծրագիրը: Դպրոցները և անձնակազմի այն անդամները, ովքեր դեռ վերապատրաստում չեն անցել, կմասնակցեն դրան ոչ ուշ, քան 2018թ. օգոստոս ամիսը՝ նոր ուսումնական տարվա համար:

Հարց – Որքա՞ն հաճախ են ուսուցիչները վերապատրաստվում ակտիվ կրակոցների համար: Ինչպե՞ս են աշակերտները վերապատրաստվում դրան (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Բոլոր ուսուցիչները և անձնակազմի անդամները վերապատրաստվել են «Run, Hide, Fight» ծրագրի շրջանակներում՝ ի պատասխան ակտիվ կրակոցների իրավիճակին, իսկ այս տեղեկությունները ամեն տարի կվերանայվեն: Աշակերտները վերապատրաստվում են դասարանական քննարկումների, դասերի և նախապատրաստման վարժանքների միջոցով:

Հարց – Դուք պատրաստվո՞ւմ եք ակտիվ կրակոցների նախապատրաստման վարժանքներ անել երեխաների/աշակերտների հետ, մասնավորապես տարրական դպրոցներում (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Դպրոցները աշակերտներին տարբեր տեսակի անվտանգության նախավարժանքների մեջ են ներգրավում, ներառյալ՝ միջտ անցկացվող հրդեհի, երկրաշարժի և lockdown/shelter-ի նախապատրաստական վարժանքները: Կարևոր է նախապատրաստել աշակերտներին, որոնք համապատասխանում են իրենց տարիքային զարգացմանը: Միջին և ավագ դպրոցները մասնակցել են ակտիվ կրակոցների նախապատրաստական վարժանքներին դասերի ժամերին, սակայն տարրական դպրոցները կենտրոնանում են նրա վրա, որ աշակերտները հետևեն մեծահասակների ցուցումներին՝ անկախ իրավիճակից:

Հարց – Ես բուժքույր եմ աշխատում հիվանդանոցում, և մենք նախապատրաստվում ենք ակտիվ կրակոցների իրավիճակներին: Դա շատ կարևոր է: Ես խոսում եմ այդ մասին իմ երեխաների հետ, բայց ի՞նչ է դպրոցն անում՝ աշակերտներին նախապատրաստելու համար (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Դպրոցները աշակերտներին տարբեր տեսակի անվտանգության նախավարժանքների մեջ են ներգրավում, ներառյալ՝ միջտ անցկացվող հրդեհի, երկրաշարժի և lockdown/shelter-ի նախապատրաստական վարժանքները: Կարևոր է նախապատրաստել աշակերտներին, որոնք համապատասխանում են իրենց տարիքային զարգացմանը: Միջին և ավագ դպրոցները մասնակցել են ակտիվ կրակոցների նախապատրաստական վարժանքներին դասերի ժամերին, սակայն տարրական դպրոցները կենտրոնանում են նրա վրա, որ աշակերտները հետևեն մեծահասակների ցուցումներին՝ անկախ իրավիճակից:

Հարց – Դպրոցները տեղեկացրե՞լ են աշակերտներին անվտանգության այս միջոցառումների մասին (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Այո, ինչպես որ հարկն է: Անվտանգության որոշ միջոցներ, ինչպիսիք են օրինակ քարտեզները վերանայելը և սարքավորումները նորացնելը հասանելի են միայն անձնակազմին, սակայն աշակերտները ներգրավվում են համապատասխան նախապատրաստական վարժանքներին և «Run, Hide, Fight» ծրագրին: Աշակերտները նաև ներգրավվում են «Եթե տեսել եք որևէ մի բան, տեղեկացրեք այդ մասին» ծրագրին, ինչպես նաև մենք խրախուսում ենք, որպեսզի բոլորը ներբեռնեն GUSD ծրագիրը և որևէ մտահոգություն ունենալու դեպքում, կիսվեն GUSD-ի անձնակազմի հետ:

Հարց – Լինելու են արդյոք ստուգումներ, որպեսզի պարզ լինի, թե արդյոք վերապատրաստումները և ծրագիրը համապատասխանում են դպրոցների պահաջներին 2018-19 տարվա համար: Սա պետք է հանրայնացվի և հասանելի լինի ընտանիքներին (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Դպրոցների ծրագրերը ներկայացվում են վերանայման համար ոչ ուշ, քան յուրաքանչյուր ուսումնական տարվա մարտի 1-ը և այն վերանայվում է իրավապահ մարմինների կողմից: Վերապատրաստումները, ներառյալ նախապատրաստական վարժանքները արձանագրվում են այս ծրագրերի մեջ: Ծրագրերին համապատասխանելը վերահսկվում է Աշակերտների աջակցման ծառայությունների տնօրենի կողմից:

Հարց – Ե՞րբ են սկսվելու ստուգումների օրերը: Մենք՝ որպես համայնք, կարո՞ղ ենք որևէ կերպ օգնել ֆինանսավորմամբ (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Այս աշխատանքը անհապաղ և շարունակական է: «Run, Hide, Fight» ծրագրի շրջանակներում անձնակազմի բոլոր անդամները պետք է վերապատրաստումները անցնեն մինչև 2018թ. ամառը: Դպրոցի անձնակազմը ներկայումս ավարտում է անվտանգության հետ կապված յուրաքանչյուր դպրոցի շենքի գույքագրումը և լավագույն փորձերի և օրինակների անհրաժեշտ աղբյուրներ է հավաքում քննարկման համար: Ներկայումս ընթացնում են հետևյալ գործողությունները՝ տեսախցիկների թվի ավելացումը որոշ դպրոցներում, անվտանգության էկրանների տեղադրումը խաղահրապարակների դարպասների վրա և երեխաների խնամքի ծրագրերի համար անվտանգ մուտքի ապահովումը:

Հարց – Կարո՞ղ էք ավելին ասել Raptor համակարգի մասին (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Raptor այցելուների ճանաչման համակարգը թույլ է տալիս դպրոցի անձնակազմին ճանաչել դպրոցի այցելուներին՝ նրանց վարորդական իրավունքի միջոցով կամ նրանց մասին տեղեկությունները համակարգի մեջ անցկացնելով, եթե նրանք վարորդական իրավունք չունեն: Յուրաքանչյուր մուտքագրում կարող է առցանց ստուգել սեռական հանցագործների ցուցակը բոլոր 50 նահանգներում, ինչպես նաև դպրոցի անձնակազմը կարող է կազմել ցուցակ, որտեղ ներառված կլինեն այն մարդիկ, որոնց հանդեպ որևէ արգելանք է դրված: Անձնակազմը ահանգանգ է ստանում, եթե դպրոց է փորձում մտնել մեկը, ով արգելված է գտնվել այնտեղ: Համակարգը նաև հնարավորություն է տալիս հետևել այցելուների և կամավորների ժամերը:

Հարց – Արտակարգ իրավիճակների/առաջին օգնության ի՞նչ պարագաներ կան յուրաքանչյուր դասարանում (3/13/2018թ. ժողով): Ինչքա՞ն հաճախ են դրանք ստուգվում:

Պատասխան – Որևէ ստանդարտ պարագաների պայուսակ չկա մի դասարանում: Առաջին օգնություն ցուցաբերելու պարագաները պահվում են առողջապահության գրասենյակում և ստուգվում են յուրաքանչյուր տարի: GUSD-ն ուսումնասիրում այդ պարագաների տարբեր տարբերակները դասարանի համար:

Հարց – Մեր տարրական դպրոցներից շատերի ցանկապատերը խաղահրապարակները մոտ են կամ բաց են հանրության համար հասանելի վայրերում: Եթե այդ խաղահրապարակներում երեխաներ են գտնվում կոնկրետ ժամերի, ինչ քայլեր ենք մենք ձեռնարկում երաշխավորելու համար, որ մեր աշակերտները խոցելի թիրախներ չեն: Տեսականորեն, որևէ մեկը կարող է կանգնել այդ ցանկապատերից դուրս և կրակելով՝ վնասել մեր աշակերտներին՝ հասկանալով, որ

աշակերտները ցրված կլինեն այնտեղ և խաղալիս կլինեն ընդմիջման կամ ճաշի ժամանակ: Նույն իրավիճակն է դահլիճների և դաշտերի հետ, երբ երեխաներն այնտեղ են (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Կախված տրված դպրոցի աշխարհագրական դիրքից՝ մեկուսացնող պատնեշներ կան խաղահրապարակների և խաղերի դաշի շրջակայքում: Մարշալ տարրական դպրոցը և Ռուզվելտ միջին դպրոցը արդեն ունեն այդ մեկուսացնող պատնեշները: Այն թույլ չի տալիս, որպեսզի աշակերտները երևան դրսի կողմից, որը ուժեղ մեկուսացում է հանդիսանում է շրջակա համայնքից:

Հարց – Դասասենյակներում կա՞ն բավականաչափ քանակությամբ պարագաներ, ինչպիսիք են ջուրը, սնունդը և առաջին օգնության պարագանները, եթե lockdown-ը երկարաձգվի (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Գլենդելի ոստիկանական բաժանմունքը ունի «classroom kit», որն առաջարկվում է պահել դասասենյակներում՝ արտակարգ դրությունների համար: Կրթաշրջանը աշխատում է ոստիկանության հետ, որպեսզի հասկանան, թե ինչ պարագաններ պետք է ներառված լինեն և հաստատվելու դեպքում ֆինանսավորում կգտնենք: Այս պայուսակը ներառում է արտակարգ դրության համար նախատեսված պարագաններ, ինչպես օրինակ առաջին օգնության պարագաներ և հաղորդակցությունն ապահովող գործիքներ: Շատ դասարաններում կան հարմարություններ երկարաձգված lockdown-ի համար, որը հնարավորություն կտա աշակերտներին և անձնակազմին օգտվել պետքարանից, անհրաժեշտության դեպքում, ապահովելով իրենց մեկուսացումը: Իրավապահ մարմիններն աշխատում են ավարտել դպրոցի lockdown-ը հնարավորինս շուտ, որպեսզի խուսափեն «երկարաձգված» ժամանակով ապաստարան ստեղծելու անհրաժեշտությունից:

Հարց – Կա՞ն անվտանգության տեսախցիկներ բոլոր դպրոցներում (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Այո:

Հարց – Sandy Hook-ի իրադեպից հետո, ի՞նչ փոփոխություններ եք առաջարկել և կիրառել (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Անվտանգ մուտքը դպրոցների գրասենյակներ և տեսախցիկների տեղադրումը երկու օրինակներն են, որ մենք կիրառել ենք Sandy Hook-ի նման նախկին դպրոցական կրակոցների դեպքերից հետո:

Հարց – Մեկնաբանություն. Մեր հիանալի կրթաշրջանը ծնողներից գումար է հանգանակում մարմնամարզության, երաժշտության և արվեստի դասերի համար: Լսում եմ, որ բոլորդ խոսում եք այնպիսի թանկ լուծումների մասին, ինչպիսիք են SRO-երը, զրահապատ ապակին, տեսախցիկները և անձնակազմի վերապատրաստման դասընթացները: Հույսով եմ, որ ուսուցիչների միությունը և կրթական լոբիինգի խմբավորումները կհամագործակցեն և կհովանավորեն օրենսգիծը ներկայացնողներին, որպեսզի այդ փոփոխությունը տեղի ունենա: Շնորհակալություն այն ամենի համար, ինչ անում եք (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Շնորհակալ ենք ձեր աջակցության համար: Դպրոցի անվտանգությունը կարևոր նշանակություն ունեցող թեմա է պետական և նահանգային օրենսդիր մարմինների մոտ: Օրինակ, մի քանի օրենքի նախագծեր կան Կալիֆորնիայում, որոնք առաջարկում են ավելացնել դպրոցի

անվտանգության ֆինանսավորումը, ներառյալ դպրոցում անվտանգության աշխատակիցների համար նախատեսված ֆինանսավորումը և այն ֆինանսական աջակցությունը, որը կտրամադրվի դպրոցներում հոգեկան առողջության ծառայությունների համար:

Հարց – Ի՞նչ էք անում, որպեսզի ավելի լավ ապահովվեք մեր դասարանների անվտանգությունը ակտիվ կրակոցների lockdown-ի ժամանակ: Անգամ մի փոքր դանդաղեցնելը կարող է կյանքեր փրկել (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Շինությունների բաժնի անձնակազմը ավարտում է անվտանգության ստուգումները բոլոր դպրոցների շենքերում: Դրանց արդյունքում պետք է որոշել, թե ինչ գործիքներ/սարքավորումներ են անհրաժեշտ յուրաքանչյուր ուսումնական մասի անվտանգությունն ապահովելու համար: Այս գործիքները ներառում են «lock-blocks»-ներ, որպեսզի դասասենյակի դռները կարողանան փակ մնալ, սակայն հենակի օգնությամբ բաց լինեն: Արտակարգ իրավիճակների lock down-ի ժամանակ դռները կարող են փակվել ներսից: Շատ կարևոր է դասասենյակներն անմիջապես անվտանգ դարձնել, սակայն կրակողին չտրամադրել սարքավորումներ, երբ նա փորձում է շրջափակել իրենց հնարավոր գոհերով: Այս դեպքերում իրավապահ մարմինները կարող են արագ և արդյունավետ կերպով դասարան մուտք գործեն: «Run, Hide, Fight» վերապատրաստման ծրագրի մի մասն է կազմում այն, որ ուսուցիչներն ու անձնակազմի անդամները օգտագործեն դասասենյակի կահույքը՝ դռները շրջափակելու համար, որպեսզի հնարավոր լինի դանդաղեցնել կրակոցների ընթացքը: Կողպված դուռը և ֆիզիկական շրջափակումը դրան հետևում մի քանի ավել բոպե կտրամադրեն իրավապահ մարմինների ժամանման համար:

Հարց – Թվում է, թե Քրեսենթա Վալեյ ավագ դպրոցը մի քանի մուտք ունի: Ինչպե՞ս կարող ենք դպրոցի շենքը ավելի անվտանգ դարձնել: Կարծում եք, որ այս դպրոցը անվտանգ է (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Բոլոր դպրոցներն էլ ունեն մի քանի մուտք և դարպասներ: Դպրոցի անձնակազմի, ուսուցիչների և ծնողների պատասխանատվությունն է անհապաղ տեղեկացնել դպրոցի ղեկավարությանը, եթե մուտքերից որևէ մեկը ապահով չէ: Եթե դպրոցի բոլոր դռներն ու դարպասները փակ են, ապա այն համարվում է անվտանգ:

Հարց - Քրեսենթա Վալեյ ավագ դպրոցի վերջին PTSA-ի հանդիպման ժամանակ աշակերտները ասացին, որ իրենց մեծագույն անհանգստությունը թմրանյութերն ու կոնիվներն են դպրոցի տարածքում: Ի՞նչ է արվում այս խնդիրների համար (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Ի պատասխան այս տեսակի մտահոգությունների, անձնակազմը պահանջել է լրացուցիչ պատահական որոնումներ Impact Canine Solutions կազմակերպությունից, որտեղից հատուկ նախապատրաստված շներ են գալիս դպրոց, ովքեր կարող են գտնել անգամ աննշան քանակությամբ թմրանյութը: SRO-ի հետ աշխատելը նույնպես ավելացնում է տեսանելիությունը դպրոցի տարածքում, որտեղ աշակերտների մտահոգություններ են ահազանգվել:

Հարց - Ի՞նչ համապատասխան դեր կարող են խաղալ ծնողները վաղվա քայլարշավի ժամանակ (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Տարրական դպրոցի աշակերտների ծնողները, ովքեր ուզում են կազմակերպել տարիքին համապատասխան գործողություններ, որ թույլ են տրվում դպրոցում, կարող են աջակցել 17 բույսերի «քայլարշավին»: Միջին և ավագ դպրոցներում աշակերտներն են առաջնորդում այդ միջոցառումները:

Հարց – Կլինեն արդյոք որևէ հետևանքներ Քրասենթա Վալեյ և կրթաշրջանի այլ դպրոցների աշակերտների համար, ովքեր մասնակցում են քայլարշավին և մնում են դպրոցի տարածքում (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Որևէ հետևանքներ չեն լինի, եթե աշակերտները վերադառնան դասարան քայլարշավի ավարտից հետո՝ ժամը 10:17-ին: Ուսուցիչներին հանձնարարվել է, որ է քննություն կամ ստուգաբաշխանձնարարել այդ օրերին:

Հարց – Ինչու են տարրական դպրոցները ներգրավված ազգային քայլարշավին մարտի 14-ին (3/13/2018թ. ժողով):

Պատասխան – Որոշ ծնողներ հստակ ցանկանում են, որ իրենց երեխաները մասնակցեն իրենց տարիքին համապատասխան գործողություններին այդ պահին:

Անվտանգությունը դպրոցում ծրագրի վերաբերյալ ժողով

Գլենդել ավագ դպրոց

2018թ. մարտի 27

Հարց - Նշեցի՞ք, որ Քրեսենթա Վալեյ ավագ դպրոցում տեղի ունեցած ժողովը տեսագրվել է: Ինչպե՞ս կարող ենք տեսնել այդ տեսագրությունը (3/27/2018թ. ժողով):

Պատասխան – Մարտի 13-ին Քրեսենթա Վալեյ ավագ դպրոցում տեղի ունեցած դպրոցի անվտանգության վերաբերյալ ժողովի տեսանյութը և մարտի 27-ին Գլենդել ավագ դպրոցում տեղի ունեցող ժողովի տեսագրությունը հասանելի կլինի GUSD-ի կայքում: Այդ կայքում առկա հղումը այցելուներին կծանոթացնի հնարավոր տեղեկատվական աղբյուրների հետ:

Հարց – Անվտանգության ծրագրերը հանրայի՞ն են (3/27/2018թ. ժողով):

Պատասխան – Այո: Դպրոցի անվտանգության ծրագրերը հասանելի կլինեն դպրոցի կայքերում՝ իրավապահ մարմինների և կրթության խորհրդի կողմից հաստատվելուց հետո: Կարևոր է հասկանալ, որ անվտանգության ծրագրերը չեն պարունակում ամբողջական տեղեկություններ: Սա ներառում է դպրոցում տեսախցիկների տեղերը և դպրոցի մանրամասն քարտեզը, որտեղ նշվում են բոլոր մուտքերն ու ելքերը: Սա արվում է, որպեսզի հնարավոր լինի խուսափել այն տրամադրելու մարդկանց, ովքեր հնարավոր է մտադրություն ունենան վնաս հասցնել դպրոցին:

Հարց – Կարո՞ղ ենք ստանալ դպրոցի անվտանգության/անվտանգության քաղաքականության և ընթացակարգերի պատճենը (3/27/2018թ. ժողով):

Պատասխան - Այո: Դպրոցի անվտանգության ծրագրերը հասանելի կլինեն դպրոցի կայքերում՝ իրավապահ մարմինների և կրթության խորհրդի կողմից հաստատվելուց հետո: Կարևոր է հասկանալ, որ անվտանգության ծրագրերը չեն պարունակում ամբողջական տեղեկություններ: Սա ներառում է դպրոցում տեսախցիկների տեղերը և դպրոցի մանրամասն քարտեզը, որտեղ նշվում են բոլոր մուտքերն ու ելքերը: Սա արվում է, որպեսզի հնարավոր լինի խուսափել այն տրամադրելու մարդկանց, ովքեր հնարավոր է մտադրություն ունենան վնաս հասցնել դպրոցին:

Հարց – Ինչպե՞ս եք ապահովում անվտանգությունը դպրոցական օրվա սկզբին, երբ բոլոր դարպասները բաց են (3/27/2018թ. ժողով):

Պատասխան – Անձնակազմի, ծնողների և հավանաբար աշակերտների ներկայությունը, ովքեր պետք է ուշադիր գննեն իրենց շրջապատը և եթե տեսնում են որևէ մի բան, որը ճիշտ չէ, պետք է այդ մասին տեղեկացնեն համապատասխան անձնակազմի անդամին: Սա ամենից արդյունավետ միջոցն է նման իրավիճակներում:

Հարց – Որևէ փոփոխություն կատարելու՞ էք հրդեհի ահազանգի զգուշացման մեջ (3/27/2018թ. ժողով):

Պատասխան – Այո: Եթե հրդեհի փորձնական ահազանգ լինի, ապա անձնակազմը և աշակերտները բարձրախոսով կլսեն հայտարարություն, որ այն փորձնական է: Եթե ահազանգը հնչում է այլ դեպքում, ապա անձնակազմը պետք է տեղեկացնի դպրոցի գրասենյակին, եթե ահազանգն իրական է և ապա բարձրախոսով տարհանման հրահանգ կտրվի: Անձնակազմը նաև պետք է հաշվի առնի ցանկացած իրավիճակ: Եթե նրանք ծուխ են զգում կամ կրակ են տեսնում. ապա չպետք է սպասել մինչև տարհանման վերաբերյալ բանավոր ցուցում ստանալուն:

Հարց – Ծնողները հատուկ անցանիշ են հավաքում դպրոցից հետո դպրոցի տարածք մուտք գործելու համար: Ցանկացած ոք կարող է իմանալ այդ թվերը և դպրոց մտնի ծնողի հետ: Ինչու՞ չեն կարող դպրոցից հետո արտաժամյա ծրագրերի աշակերտները դարպասների մոտ ուղեկցվել օգնականների միջոցով: Որևէ բան մտածեք, որպեսզի օգնականներն ու ծնողները հաղորդակցվեն միմյանց հետ, միգուցե հաղորդագրության միջոցով, որպեսզի ծնողները չկարողանան բացել դարպասը (3/27/2018թ. ժողով):

Պատասխան – Աշակերտների անվտանգությունը պետք է առաջնահերթություն լինի բոլոր մեծահասակների համար, ներառյալ նրանց համար, ովքեր թուղնում կամ վերցնում են երեխաներին երկարօրյա ծրագրերից հետո: Հաշվի առնելով երեխայի խնամքի տարբեր ծրագրերի չափսը, անհնար է աշակերտներին անհատապես ուղեկցել դարպասների մոտ եւ նահանգային պահանջների համաձայն՝ ծնողները պետք է մուտք գործեն եւ դուրս գան իրենց երեխաների հետ: Կողմնակցությամբ մուտքի դարպասները թույլ են տալիս թույլտվություն ստացած ծնողներին մուտք գործել եւ բոլոր ծնողները, ում տրվել են իրենց անհատական կողերը, ասվել է, որ դրանց մասին որևէ մեկին չտեղեկացնեն եւ թույլ չտան, որ մյուսները մուտք գործեն դպրոցի տարածք: Եթե պարզվել է, որ ծնողը որևէ մեկին հայտնել է իր եզակի կողը, նրանք կկորցնեն մուտքի իրենց հնարավորությունը եւ ստիպված կլինեն յուրաքանչյուր անգամ զանգահարել դպրոց հասնելիս, որպեսզի ներս մտնեն: Եթե ծնողը նկատում է, որ ինչ-որ մեկը տվել է իրենց կողը, կամ որ նրանք թույլ են տալիս ուրիշներին մուտք գործել իրենց հետ, խնդրվում է անմիջապես տեղեկացնել EEEELP- ի աշխատակցին կամ EEEELP- ի ղեկավարին:

Հարց – Որպես կրթաշրջանի համար փոխարինող աշխատող, ինձ համար բավականին մտահոգիչ է, թե որքան հեշտ կարելի դպրոցի տարածք մուտք գործել: Ինչպե՞ս կարող ենք փոխել դա (3/27/2018թ. ժողով):

Պատասխան - GUSD-ի աշխատակիցները աշխատում են անվտանգ պահել դպրոցի բոլոր մուտքերը եւ վերահսկել աշակերտների մուտքը և ելքը դպրոցի տարածք: Անվտանգ մուտքերի բանալին տեղադրվել է բոլոր դպրոցների գրասենյակներում եւ ծնողները դպրոց կարող են մտնել ծածկագրերով, եթե պետք է թողնեն կամ վերցնեն աշակերտներին դպրոցից առաջ և հետո գործող երեխաների խնամքի ծրագրերից: Եթե կա դպրոց կամ դպրոցներ, որը մասնավոր մտահոգություն է առաջացնում, ապա խնդրում ենք դիմել դպրոցի գրասենյակ կամ դոկտոր Ռենե Վալդեսին՝ աշակերտների աջակցման գրասենյակի տնօրենին՝ (818) 24103111, ներքին 1285 համարով կամ rvaldes@gusd.net էլ. փոստով: Նա աշխատելու է դպրոցի աշխատակիցների հետ՝ ավելացնելով անվտանգության այն միջոցը, որն անհրաժեշտ է այդ խնդիրները լուծելու համար:

Հարց – Իմ երեխաները հաճախում են Մարք Քեյթլ տարրական դպրոցը: Այնտեղ դարպասների համար նոր անցանիշեր կան, սակայն դեռևս ոմանք թույլ են տալիս, որ այլ մարդիկ ներս գնան դպրոց: Ինչպե՞ս կարելի է դադարեցնել այս երևույթը (3/27/2018թ.ժողով):

Պատասխան - Եթե պարզվել է, որ ծնողը որևէ մեկին հայտնել է իր եզակի կողը, նա կկորցնի մուտքի իր հնարավորությունը եւ ստիպված կլինի յուրաքանչյուր անգամ զանգահարել դպրոց հասնելիս, որպեսզի ներս մտնի: Եթե ծնողը նկատում է, որ ինչ-որ մեկը տվել է իր կողը, կամ որ նա թույլ է տալիս ուրիշներին մուտք գործել իր հետ, խնդրվում է անմիջապես տեղեկացնել EEELP- ի աշխատակիցին կամ EEELP- ի ղեկավարին: Համատեղ ջանքեր պետք է գործադրվեն անձնակազմի եւ ծնողների կողմից, որպեսզի բոլոր ծնողները/խնամակալները հետևեն անվտանգության անհրաժեշտ ընթացակարգերին:

Հարց – Դուք թու՞յլ եք տալիս, որպեսզի կրակոցների ժամանակ աշակերտները դուրս գան դպրոցի տարածքից: Ինչու՞ այդ և ինչու՞ ոչ (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Այո: «Վազիր, թաքնվիր, կովիր» ընթացակարգը թույլ է տալիս աշակերտներին և անձնակազմին փախնել դպրոցից և հանդիպել տարհանման համար նախատեսված վայրերում: Եթե ուսանողները եւ աշխատակիցները կարող են անվտանգ դուրս գալ դպրոցից՝ ավելի ապահով վայր հասնելու համար, սա նախընտրելի է, քան թաքնվել կամ պայքարել: Ակտիվ հրաձգային միջոցառումներից հետո, երբ ուսանողները եւ աշխատակիցները հեռանում են դպրոցի տարածքից, իրավապահ մարմինները պետք է փնտրեն յուրաքանչյուր անհատի, այսինքն նշանակված վայրում գտնվել աջակցում է, որպեսզի հետո հնարավոր լինի վերամիավորվել ընտանիքների հետ:

Հարց – Ի՞նչ ընթացակարգ է գործում այն դեպքերի համար, երբ դպրոցին վտանգ է սպառնում: Ե՞րբ այդ մասին կտեղեկացվի GUSD-ի աշակերտների ծնողներին (3/27/2018թ.ժողով):

Պատասխան - Անմիջական մտահոգությունը դպրոցի աշակերտների եւ աշխատակիցների անվտանգությունն է: Ծնողները հնարավորինս շուտ կտեղեկացվեն, սակայն խնդրվում է հասկանալ, որ GUSD-ի անձնակազմը եւ իրավապահ մարմինները պետք է մասնակցեն սպառնալիքի չեզոքացմանը եւ ապա հոգ կտանեն բժշկական այլ արտակարգ իրավիճակների մասին, որոնք կարող են առաջացած լինել այդ իրավիճակից: Ծնողներին/խնամակալներին խնդրվում է դպրոց չգալ, որպեսզի շտապ օգնության մեքենաները եւ աշխատակիցները հնարավորություն ունենան մուտք գործել եւ որպեսզի իրավապահ մարմինները կարողանան մանրամասն փնտրել եւ ուսումնասիրել տարածքը: Որքան հնարավոր է շուտ ծնողները/խնամակալները կստանան պաշտոնական ուղղություններ, թե ուր պետք է գնան իրենց երեխաների հետ վերամիավորվելու համար: Սա սովորաբար տեղի է ունենում դպրոցից հեռու վայրում, եւ ուսանողները տեղափոխվում են այդ վայր: Գործադրվում են բոլոր ջանքերը, որպեսզի հնարավոր լինի կապվել ցանկացած երեխայի ծնողների/խնամակալների հետ, եթե երեխան վիրավոր է, որպեսզի նրանք իմանան, թե որտեղ են իրենց երեխային տեղափոխել բուժման համար: Իրավիճակի կայունացումից հետո, GUSD- ի անձնակազմը եւ առաջին պատասխանողները կորոշեն իրավիճակի փաստերը եւ համապատասխան հայտարարություններ կներկայացվեն հանրությանը: Սա կարող է մի քանի ժամ տևել, քանի որ այդ իրավիճակից հետո առաջնային եւ անհապաղ ուշադրությունը կլինի ապահով դարձնել դպրոցը ուսանողների ու աշխատակիցների համար:

Հարց – Ի՞նչ ընթացակարգ է կիրառվում այն աշակերտների համար, ովքեր lockdown-ի ժամանակ գտնվում են պետքարանում (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Բոլոր ուսուցիչներն ու անձնակազմի անդամները վերապատրաստված են կիրառելու «Վազիր, թաքնվիր, կովիր» ընթացակարգը և օգնելու աշակերտներին հասկանալ դրա իմաստը: Եթե աշակերտները լինեն պետքարանում, ապա պետք է հաշվի առնեն, թե արդյոք նրանք կարող են «վազել» անվտանգ ձևով կամ, եթե նրանք պետք է «թաքնվեն»: Ուսանողները կարող են թաքնվել զուգարանակոնքի հետևում՝ փակելով իրենց ոտքերը: Այս անապահով տարածքները կլինեն առաջինը, որը պետք է զննվի իրավապահ մարմինների կողմից, երբ նրանք մտնում են դպրոց:

Հարց – Կարող եք նկարագրել, թե անվտանգության ինչ ընթացակարգեր կան, եթե հրաձիգ լինի դպրոցի տարածքում (3/27/2018թ.ժողով):

Պատասխան - Անմիջապես lockdown կհայտարարվի, և աշակերտներն ու անձնակազմի անդամները կհետևեն «Վազիր, թաքնվիր, կովիր» ընթացակարգերին: Աշխատակիցներին տեղեկացվում է, որ եթե նրանք լսեն կրակոցներ կամ որեւէ հիմք ունենան ենթադրելու, որ հանցագործը գտնվում է դպրոցի տարածքում վնաս պատճառելու մտադրությամբ, նրանք պետք է ապահովեն իրենց աշակերտների անվտանգությունը եւ զանգահարեն ոստիկանության եւ դպրոցի գրասենյակին: Դասասենյակի դռները փակվում են, պատուհանները արգելափակվում են, եւ կահույքն օգտագործվում է որպես պատնեշ դռների համար: Իրավապահ մարմինների հետ կապ է հաստատվելու դպրոցի գրասենյակում գտնվող արտակարգ իրավիճակների կոճակը սեղմելով կամ 911 համարին զանգահարելու միջոցով: Սովորաբար 911 զանգերին պատասխանողները նույն դեպքի վերաբերյալ բազմիցս զանգեր են ստանում: Վտանգը չեզոքացնելուց հետո, իրավապահ մարմինները կշրջափակեն դպրոցի տարածքը, որպեսզի համոզվեն կա արդյոք որևէ վտանգ, թե ոչ: Դպրոցի հսկողության տեսախցիկները աջակցում են այս խնդրին եւ հնարավորություն են տալիս արագ հասկանալու շենքում տիրող իրավիճակը: Այլ առաջին օգնության պատասխանատուներին թույլատրվում է մուտք գործել դպրոց բժշկական օգնություն տրամադրելու համար, եւ իրավապահ մարմինները սկսում են տարհանել մարդկանց՝ սենյակից սենյակ եւ սկսում են հաշվել բոլոր ուսանողներին, աշխատակիցներին եւ այցելուներին: Ուսանողները այնուհետև վերամիավորվում են ծնողների/խնամակալների հետ, որը սովորաբար դպրոցից դուրս վայրում է լինում, որպեսզի չխանգարեն ընթացիկ քննությանը:

Հարց – Բացատրեք, թե անվտանգության ի՞նչ ընթացակարգեր են կիրառվում հանգստյան օրերի և գիշերվա ժամերին (3/27/2018թ.ժողով):

Պատասխան - Գիշերային կամ հանգստյան օրերին տեղի ունեցող դպրոցական միջոցառումները պետք է պլանավորվեն անվտանգության նկատառումներով: Անվտանգության ընթացակարգերը կախված կլինեն իրադարձության ծավալից: Խոշոր իրադարձությունները, ինչպիսիք են ֆուտբոլային խաղերը եւ ավարտական երեկոները, կներառեն իրավապահ մարմինների եւ անվտանգության աշխատողների: Դպրոցի բոլոր միջոցառումները պետք է վերահսկվեն GUSD- ի աշխատակիցների կողմից, ովքեր վերապատրաստվել են արտակարգ իրավիճակների ընթացքում արձագանքելու համար:

Հարց – Կատարվո՞ւմ են արդյոք պատահական ստուգումներ՝ հրազեն հայտնաբերելու համար կամ պահարանների ստուգումներ (3/27/2018թ. ժողով):

Պատասխան - GUSD-ն ունի պատահական որոնումներ իրականացնելու սարքավորում, որով մետաղներն են հայտնաբերվում: Որոնումները կատարվում են ինչպես հարկն է միջին եւ ավագ դպրոցներում: Impact Canine Solutions կազմակերպությունը շներ է տրամադրում լրացուցիչ որոնումների համար, որոնք նույնիսկ պատրաստված են հայտնաբերելու թմրամիջոցներ, հրազեն եւ կրակայնության վրա հիմնված իրեր:

Հարց – Որևէ նոր ընթացակարգ ընդունվե՞լ է 2/14/18թ. Փարքլանդի իրադարձություններից հետո (3/27/2018թ. ժողով):

Պատասխան – Այո: Բոլոր դպրոցների անձնակազմի անդամները վերապատրաստվել են «Վազիր, թաքնվիր, կովիր» ընթացակարգերի համար: Սա փոփոխություն է համարվում GUSD-ի համար, քանի որ նախկինում կիրառվում են միայն lockdown-ի ընթացակարգերը: Համապատասխան անձնակազմի ներկայացուցիչները գնում են բոլոր դպրոցները, որպեսզի հասկանան դպրոցի կարիքները՝ ներառյալ դպրոցի սարքավորումները և անհրաժեշտ պիտույքները՝ դպրոցի անվտանգությունն ուժեղացնելու համար:

Հարց – Երբ կրակողը մտնում է դպրոց, ինչ քայլեր եք ձեռնարկում, որպեսզի շեղեք նրա միտքը, ուշադրությունը կամ զգացմունքային վիճակը (3/27/2018թ. ժողով):

Պատասխան - Եթե հանցագործը մտնում է դպրոցի տարածք, ապա անհապաղ քայլը աշակերտներին և աշխատակիցներին ապահով վայրեր տեղափոխելն է: Անհապաղ lockdown կհայտարարվի: Դպրոցի անձնակազմը վերապատրաստված չէ, եւ նրանցից չի ակնկալվում կապի մեջ մտնել կրակոցներ կատարողի հետ՝ նրա միտքը, ուշադրությունը կամ զգացմունքային վիճակը շեղելու համար: Հրաձիգի վերաբերյալ ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ անհատները հեշտ թիրախ են փնտրում եւ հասկանում են, որ շատ սահմանափակ ժամանակ ունեն մինչև իրավապահ մարմինները կժամանեն մեծ քանակությամբ, որպեսզի կանգնեցնեն այդ գործողությունները: Հրաձիգի միջին իրադարձությունը տևում է հինգից ութ րոպե, իսկ իրավապահները ներգրավվում են երկուսից հինգ րոպեի ընթացքում: ««Վազիր, թաքնվիր, կովիր» ընթացակարգը ներառում է դռները փակելու և կահույքով ամրապնդելու հրահանգները, որպեսզի հետաձգեն կրակողի մուտքն ու թիրախն ավելի դժվար դարձնեն: Աշխատակազմը նաև վերապատրաստված է գննել իրենց շրջակա միջավայրը, որ գտնեն անհրաժեշտ գործիքներ, եթե նրանք պետք է պայքարեն, ինչպես օրինակ հրդեհը հանգցնելու գործիքներից օգտնվելը:

Հարց – Ի՞նչ այլ կապի միջոց կա 911-ի հետ կապ հաստատելու համար, հեռախոսից բացի (3/27/2018թ. ժողով):

Պատասխան - Բոլոր դպրոցները ունեն արտակարգ իրավիճակների համար կիրառվող կոճակ, որոնց միջոցով հնարավոր է անմիջապես կապ հաստատել Լա Քրեսենթայի շերիֆների և Գլենդելի ոստիկանության հետ: Եթե այն սեղմվում է, ապա դա առանց բացատրության ազդանշան է արտակարգ իրավիճակների համար: Դպրոցները, որոնք սխալմամբ սեղմել են այդ կոճակը, շատ լավ գիտեն, որ իրավապահները արձագանքում են այս ահազանգերին շատ արագ և անհապաղ անդրադառնում են անվտանգության խնդիրներին:

Հարց – Ի՞նչ դիրքորոշում ունի կրթաշրջանը ուսուցիչներին և դպրոցի անձնակազմին զինելու հարցում (3/27/2018թ. ժողով):

Պատասխան - Քրեական օրենսգրքի 626.9 կետի («Ոչ մի հրազեն դպրոցում» օրենք) համաձայն, դպրոցի տարածքում կամ 1000 ոտնաչափ (feet) տարածքի վրա հրազեն ունենալը արգելվում է, բացառությամբ այն անձի, ով համապատասխանում է օրենքով սահմանված բացառություններից մեկին (օրինակ, իրավապահ մարմինների կամ պատվավոր թոշակի անցած խաղաղապահ ծառայող է, իր պարտականությունների կատարմամբ զբաղվող ռազմական ուժի անդամ է կամ գործող հրազենի գործադրման թույլտվություն ստացած անվտանգության պահպանության ծառայող է): Մեկ այլ բացառություն էլ կա Քրեական օրենսգրքի 626.9 կետում, որը թույլ է տալիս անձին ունենալ թաքնված հրազենի արտոնագիր (CCW) դպրոցից 1000 ոտնաչափ հեռավորության վրա զենք ունենալ: AB 424 (Ch 779, 2017 կանոնադրություն) օրենքի համաձայն, Քրեական օրենսգրքի 626.9 կետը վերացնում է այն թույլտվությունը, որով գերատեսուչը կամ նշանակված անձը գրավոր թույլտվություն է տալիս վավեր CCW լիցենզիա ունեցող անձին զենք կրելու դպրոցի տարածքում:

Հարց – Սոցիալական լուծումները երկարատև են: Արդյոք եղե՞լ են քննարկումներ սովորական հագուստով զինված անվտանգության աշխատակիցներ ունենալու համար (3/27/2018թ. ժողով):

Պատասխան - GUSD-ն դեռևս չի դիտարկում զինված անվտանգության աշխատողների, համազգեստով կամ սովորական հագուստով անձանց ներկայությունը դպրոցներում: Պետության օրենսդիր մարմինը քննարկում է դպրոցական ռեսուրսների սպաներ կամ զինված անվտանգության աշխատակիցներ ներգրավել դպրոցներում, սակայն նրանք դեռևս չեն քվեարկել այս օրինագծի օգտին կամ որևէ ֆինանսավորում չունեն դեռ: AB 2067-ը ներկայացվեց Համագումարի անդամ Գալլագերի կողմից քննարկելու համար: 2018 թ. մարտի 27-ին Գլենդելի ոստիկանության կապիտան Սքոթ Բիքլը իր անհանգստությունը հայտնեց այն մասին, որ սովորական հագուստով անհատները, ովքեր զենք են կրում՝ շեղում են համազգեստով աշխատողներին, երբ նրանք շտապում են դեպքի վայր ի պատասխան հրաձգության: Նրանք ստիպված կլինեն կանգնեցնել այդ անձանց եւ վստահանալ, որ հասարակ հագուստով անհատը սպառնալիք չէ՝ այդպիսով հետաձգելով պատասխանը փաստացի սպառնալիքի հանդեպ:

Հարց – Դեպքերին առաջինը արձագանքողները (ոստիկանություն, շտապօգնության աշխատակազմ) կապի մե՞ջ են գտնվում դպրոցների հետ՝ հատուկ ուսուցման աշակերտների վերաբերյալ: Նրանք տեղյա՞կ են, թե հատուկ կրթություն/SAI դասարանները որտեղ են տեղակայված յուրաքանչյուր դպրոցում: Բոլոր աշխատողները ու առաջինը արձագանքողները տեղյա՞կ են, թե ինչպես պետք է վերաբերվել հատուկ կարիքներով երեխաներին, ովքեր չեն կարող արձագանքել այն կերպ, ինչպես ակնկալվում է եւ չեն հասկանում իրավիճակը (3/27/2018թ. ժողով):

Պատասխան – Այո: Գլենդելի ոստիկանությունը, Քրեսենթա Վալեյի շերիֆները և հրդեհի բաժանմունքները վերապատրաստում են անցնում, որպեսզի անդրադառնան հատուկ կարիքներ ունեցող աշակերտներին և անձնակազմի անդամներին: Օրինակ, Գլենդելի ոստիկանները հատուկ վերապատրաստում են ստանում, երբ դեռ ակադեմիայում են սովորում, այնուհետև վերապատրաստում են անցնում ամեն երկու տարին մեկ, թե ինչպես պետք է աշխատել հատուկ կարիքներ ունեցող և մտավոր խնդիրներ ունեցող անհատների հետ: Այդ սենյակները ներառված են

արտակարգ իրավիճակներին արձագանքելու համար նախատեսված քարտեզներում, որ առաջինը արձագանքողները օգտվեն դրանցից, երբ գնում են դպրոցը՝ lockdown-ից հետո:

Հարց - Արդյոք հնարավոր կլինի՞ ապակենտրոնացնել ոստիկաններին՝ նրանց դպրոցներում տեղավորելու համար: Տեխնոլոգիան հնարավորություն է տալիս աշխատել հեռավորության վրա: Գաղափարն այն է, որ լավագույն և փորձառու մասնագետները հայտնվեն այդ իրավիճակներում: Ոչ թե 2 րոպեում, այլ անմիջապես: Հեռախոսով եւ նոութբուքով շատ աշխատանք կարելի է կատարել (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Բացի դպրոցական ռեսուրսների աշխատակիցներից, որ գտնվում են Գլենդել և Հուվեր ավագ դպրոցներում Գլենդելի ոստիկանության վարչությունը արդեն տեղակայում է ոստիկաններ ամբողջ համայնքի շրջանում եւ աջակցում է ապակենտրոնացված տարածքային հրամանատարության վայրերում, ինչպիսիք են Galleria-ի ենթակայանը եւ Montrose ենթակայանը: Մեքենայով ոստիկանության աշխատակիցները տեղակայված են Գլենդելի եւ Մոնթրոսի համայնքում՝ նախապատվություն տալով շրջապատող տարածքները վերահսկելու: Բացի Քրեսենթա Վալեյ ավագ դպրոցում գտնվող ռեսուրսային աշխատակիցներից, Քրեսենթա Վալեյ համայնքը պարբերաբար վերահսկվում է այնտեղի շերիֆների, Գլենդելի ոստիկանության և Կալիֆորնիայի Highway Patrol-ի կողմից՝ ցանկացած ճգնաժամին արագ արձագանքելու համար:

Հարց – Քանի՞ ռեսուրսների աշխատակից կա Գլենդել ավագ դպրոցում (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Գլենդել ավագ դպրոցում մեկ ռեսուրսների աշխատակից կա, ում, անհրաժեշտության դեպքում, աջակցում են պարեկային և հետաքննության բաժինները: Դպրոցում առկա են նաև լրացուցիչ անվտանգության աշխատակիցներ: Դպրոցական լայնածավալ միջոցառումների ժամանակ կրթաշրջանը խնդրում է Գլենդելի ոստիկանությանը լրացուցիչ ոստիկաններ ներգրավել՝ անվտանգությունն ապահովելու համար:

Հարց – Դպրոցի անվտանգության տեսախցիկները վերահսկվո՞ւմ են դպրոցի ժամերին յուրաքանչյուր դպրոցում (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Անվտանգության տեսախցիկները մշտապես չեն վերահսկվում: Այդ տեսախցիկները արժեքավոր տեղեկություն են տրամադրում, երբ որևէ մի բան է տեղի ունեցած եղել և հանդիսանում են հետաքննական գործիք այդ պարագայում:

Հարց – Փոխարինողները կարո՞ղ են ID քարտեր ունենալ (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Այո: Մարդկային ռեսուրսների գրասենյակը աշխատելու է բոլոր աշխատակիցներին ID քարտեր տրամադրել:

Հարց – Փոխարինողները GUSD-ի էլեկտրոնային փոստից չեն կարող օգտվել: Ինչպես կարող են փոխարինող ուսուցիչները տեղեկացված լինեն հրդերի փորձարկումների/lockdown-ի և այլ կարևոր տեղեկությունների մասին, որ մեզ են վերաբերում (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – GUSD-ի մարդկային ռեսուրսների գրասենյակը աշխատելու է այլ բաժանմունքների հետ, որպեսզի փոխարինող աշխատողները կարողանան տեղեկացված լինել և իրենց հասանելի լինեն իրենց աշխատանքի վայրում տեղի ունեցող իրադարձությունները:

Հարց – Կարո՞ղ ենք փորձել, որպեսզի բոլոր դասարանների դռները կողպեքներ ունեն, եթե դպրոցի տարածքում հրաձիգ կա (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Այո: Սա մեկ բաղադրիչ է, որ տարածքների աշխատակիցները հաշվի են առնում յուրաքանչյուր դպրոցում անվտանգության գույքագրման իրականացման ժամանակ: Նրանք փորձում են տեսնել, թե կողպեքների ինչպիսի մեխանիզմ է արդեն տեղակայված, եւ ինչ կարող է անհրաժեշտ լինել ուսումնական տարածքն անվտանգությունից ելնելով `անվտանգության բարձրացման առաջարկներ ներկայացնելու համար:

Հարց – Պետք է արդյոք մեր ցանկապատերը ունենան մետաղյա փշալարեր (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Ոչ: Անվտանգության տեսանկյունից այն կիտչնդոտի առաջինը արձագանքողների մուտքը դպրոց և այն հաղորդագրություն է ուղարկում աշակերտներին, որ դպրոցը անվտանգ վայր չէ:

Հարց – Կա՞ր արդյոք կրակոցների համար նախատեսված նախապատրաստական միջոցառումներ: Ինչպես ես եմ տեղեկացված միայն մեկ նախապատրաստական միջոցառում է եղել այս տարի: Համոզված չեմ, թե ինչ տեսակի միջոցառում է եղել (3/27/2018թ.ժողով):

Պատասխան - Աշխատակազմը վստահ չէ, արդյոք այս հարցը վերաբերում է կոնկրետ որևէ դպրոցի: Եթե այն որևէ դպրոցի վերաբերում է, խնդրում ենք դիմել դպրոցի վարչական աշխատակազմին `պարզելու համար, թե 2017/2018 ուսումնական տարում ուսանողների հետ ինչ վարժանքներ են անցկացվել: Տարրական դպրոցները պարտադիր պետք է ունենան յուրաքանչյուր օրացուցային ամսվա արտակարգ նախապատրաստական վարժանքներ (հրդեհ, երկրաշարժ կամ lockdown): Միջին դպրոցները պետք է ունենան այս ուսումնական տարիները տարին առնվազն չորս անգամ, եւ ավագ դպրոցները պետք է ունենան առնվազն տարին երկու անգամ:

Հարց – Հնարավոր է, որ նախատեսված վերապատրաստում լինի մեր ավագ դպրոցի աշակերտների համար, երբ կրակոցներ կամ այլ տեսակի ճգնաժամ է տեղի ունենում (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Այո: Աշխատակազմը ներկայումս փնտրում է այն լավագույն փորձը այլ կրթաշրջաններից, թե որ դասընթացն է համապատասխանում տարրական, միջին և ավագ դպրոցների աշակերտներին: Այս ուսուցողական նյութերը կօգտագործվեն բոլոր աշակերտների համար 2018/2019 ուսումնական տարվա համար:

Հարց – Կարող եք աշակերտների թույլտվությունը ստանալ `մինչև նրանց մասին որևէ տեղեկություն ներկայացնելը: Ո՞ր դասարանին և տարիքին է վերաբերում աշակերտի գաղտնիությունը (3/27/2018թ.ժողով):

Պատասխան – Աշակերտները կարող են իրենց համաձայնությունը տալ, երբ դառնում եմ 18 տարեկան կամ օրենքով ազատագրված եմ: Աշակերտի գաղտնիությունը վերաբերում է բոլոր աշակերտներին `անկախ իրենց տարիքից և դասարանից:

Դպրոցի անվտանգության վերաբերյալ հարցեր, որ ստացվել են առցանց

Հարց - Ես առաջարկ ունեմ, այլ ոչ թե հարց: Կարծում եմ, որ անհրաժեշտ է փոխարինող աշխատակիցներին ապահովել վերապատրաստման դասընթացներով (դասակարգված եւ հավաստագրված աշխատակազմ), որպեսզի նրանք իմանան, թե ինչ պետք է անեն արտակարգ իրավիճակների դեպքում: Իմ կարծիքով, սա ներկայումս հնարավոր չէ:

Պատասխան – Շնորհակալություն առաջարկի համար: «Վազիր, թաքնվիր, կովիր» ընթացակարգի վերապատրաստումը և արտակարգ իրավիճակներին պատասխան տալը, պետք է հասանելի լինի անձնակազմի բոլոր անդամներին, ներառյալ փոխարինող աշխատողները: Նպատակն է, որ այս վերապատրաստումը ավարտվի 2018թ. ամռանը:

Հարց - Կա ազգային արշավ, որը կոչվում է «Դադարեցնել արյունը»: Այս տեղեկացվածության քարոզարշավի նպատակը բժշկության ոլորտից դուրս գտնվող անձանց ուսուցանելն է, թե ինչպես միջամտել բժշկական արտակարգ իրավիճակներին, որոնք ունեն ծանր արյունահոսություն: ԱՄՆ-ի որոշ դպրոցական շրջաններ ունեցել են ուսուցիչների եւ դպրոցական անձնակազմի համար նախատեսված այս ուսուցումը: Արդյոք GUSD-ն սա կներկայացնի՞ ուսուցիչների եւ աշխատակիցների համար հնարավոր արտակարգ իրավիճակների պատրաստվածության վերապատրաստման դասընթացին:

Պատասխան – Այո. Միշել Գրինը, ով GUSD-ի առողջապահության ծառայությունների համակարգողն է, փորձում է կապ հաստատել համայնքի այդ անդամի հետ, ով առաջարկել է այս ծրագիրը, որպեսզի հավելյալ տեղեկություններ ստանա և հնարավորության դեպքում վերապատրաստում կնշանակի այս ամռանը:

Հարց - Ի՞նչ դասընթացներ/նախապատրաստություն եք նախատեսում տալ բոլոր ուսուցիչներին եւ աշխատակիցներին, եւ ինչպե՞ս եք ապահովում, որ բոլոր ուսուցիչներն ու աշխատակիցները իմանան, թե ինչ պետք է անեն ակտիվ հրաձգության արտակարգ իրավիճակներում:

Պատասխան – Գլենդելի ոստիկանական բաժանմունքը Վազիր, թաքնվիր, կովիր» ընթացակարգի վերապատրաստում է տրամադրում 17 դպրոցների համար 2018թ. փետրվարից մինչև 2018. մարտի 26-ը: Դպրոցները և անձնակազմի անդամները, ովքեր դեռ չեն մասնակցել վերապատրաստմանը, կանցնեն դա ոչ ուշ, քան 2018թ. օգոստոս ամիսը՝ մինչև նոր ուսումնական տարվա սկիզբը:

Հարց – Ինչ ընթացակարգ է կիրառվում տարրական դպրոցներում կրակոցների ժամանակ, երբ դասարանները մեծ պատուհաններ ունեն:

Պատասխան – Շենքերի հարցերով զբաղվող անձնակազմը իրականացնում է բոլոր դպրոցների անվտանգության գույքագրումը՝ բացահայտելու ուսումնական տարածքները, որտեղ անհրաժեշտ են պատուհանները փակող շերտավարագույրներ, որոնք կարող են կիրառվել lockdown-ի ժամանակ: Ընթացակարգերը ներառում են լույսերը անջատելը, շերտավարագույրները փակելը կամ այլ կերպ պատուհաններից տեսանելիությունը կանխելը և փակ դռները կահույքով արգելափակելը որպես լրացուցիչ պաշտպանություն:

Հարց – Ինչու՞ անվտանգության կան կան միջին դպրոցներում, սակայն չկան տարրական դպրոցներում: Ինչպե՞ս կարող եք տարրական դպրոցները անվտանգ պահել:

Պատասխան - Այս պահի դրությամբ բոլոր տարրական դպրոցներում անվտանգության պահակների թիվը տեղավորումը չի քննարկվում: Պետության օրենսդիր մարմինը քննարկում է դպրոցական ռեսուրսների սպաներ կամ զինված պահակներ դպրոցներում տեղավորելու համար, սակայն նրանք դեռևս չեն քվեարկել այս օրինագծի կամ և որևէ ֆինանսավորում չի նախատեսվում դրա համար: AB 2067- օրենքը ներկայացվեց Համագումարի անդամ Գալլագերի կողմից քննարկելու համար: Տարրական դպրոցները ունեն ապահով մուտք դպրոցի գրասենյակներում, անվտանգության տեսախցիկներ, դուռը անվտանգ փակելու հարմարանքներ և այլ գործիքներ դասարանի դռների, փակ դարպասների և կողավորված դարպասների մուտքի համար: Վերջինս կիրառվում է երեխաների խնամքի ծրագրերի համար, որը գործում է, երբ աշակերտները դպրոցում չեն:

Հարց - Հաշվի առնելով այն բոլոր փաստարկները, որոնք վերաբերում են դպրոցական ռեսուրսների պաշտոնյաներին դպրոցներում տեղավորելու սահմանափակ հնարավորություններին եւ հաճախ վնասակար ազդեցություններին, հատկապես այն դպրոցներում, որտեղ աշակերտների մեծամասնությունը ռասսայապես տարբեր են, GUSD-ն նախատեսու՞մ է կենտրոնանալ այն ֆինանսավորման վրա, որն անհրաժեշտ է դպրոցի հոգեբանների, խորհրդատուների եւ լրացուցիչ վերապատրաստման համար, որն անհրաժեշտ է ուսուցիչների, աշխատակիցների, աշակերտների և ընտանիքների բարենպաստ վարքի ու ժեղացման միջոցների համար (PBIS):

Պատասխան - GUSD-ն գտնում է, որ դպրոցի անվտանգությունը ներառում է բոլոր գործակալությունների եւ աջակցող մատակարարողների միջեւ համագործակցությունը, ներառյալ ավագ դպրոցներում դպրոցական ռեսուրսների պաշտոնյաների տեղավորման դրական ազդեցությունը՝ աշակերտների և իրավապահների միջեւ ամուր հարաբերություններ զարգացնելու համար: PBIS-ը հաստատվում է բոլոր դպրոցներում, եւ դպրոցների վերջին մասը կսկսի վերապատրաստվել 2018/2019 ուսումնական տարում: GUSD- ն զգալիորեն ավելացրել է նաև հոգեկան առողջության խորհրդատուների թիվը, ինչպես նաև խորհրդատվական եւ սոցիալական պրակտիկանտ աշխատողների մատչելիությունը՝ աշակերտներին օգնելու համար:

Հարց - Արդյոք GUSD-ն ապահովու՞մ է բոլոր ժամանակներում բոլոր դպրոցների կողպված եւ վերահսկվող դարպասները: Արդյոք GUSD-ն տրամադրու՞մ է մետաղ որոնող սարքեր բոլոր դպրոցական մուտքերում, ինչպես ապահովվում է դատարանի մուտքի անվտանգությունը:

Պատասխան - GUSD-ն ապահովում է փակ դարպասներ և վերահսկողության բոլոր դպրոցների շուրջ, երբ ուսանողները մտնում են դպրոց եւ դուրս են գալիս այնտեղից: Դպրոցական մուտքերում մետաղ որոնող սարքեր տեղադրելու ծրագիր չկա: Սա աշակերտների եւ աշխատակիցների համար խոչընդոտ կստեղծի եւ հնարավորություն կստեղծի այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են վնաս հասցնել մեծ թվով աշակերտներին, որոնք սպասում են ամեն առավոտ այդ սարքի միջով անցնելու համար, ինչպես այն հրաձգությունը, որ տեղի ունեցավ 2013թ. Լոս Անջելեսի օդանավակայանում, TSA անցակետում եւ ստուգման տարածքում: GUSD-ն ունի սարքավորում, որն իրականացնում է մետաղ հայտնաբերող պատյաններ՝ պատահական որոնումներ կատարելու համար: Իսկ պատահական որոնումները կատարվում են համապատասխանաբար միջին եւ ավագ դպրոցներում:

Հարց – Արդյոք GUSD-ն վարձելու^օ է անվտանգության պահակներ որոնք կլինեն զինված և վերապատրաստված այդ դպրոցներում:

Պատասխան - Մա դեռևս չի քննարկվել: Պետության օրենսդիր մարմինը քննարկում է դպրոցական ռեսուրսների սպաներին կամ զինված պահակներին բոլոր դպրոցներում տեղավորելու համար, սակայն նրանք դեռևս չեն քվեարկել այս օրինագծի ուղղությամբ և որևէ ֆինանսավորում չի նախատեսվում դրա համար: AB 2067- օրենքը ներկայացվեց Համագումարի անդամ Գալլագերի կողմից քննարկելու համար:

Հարց – Արդյոք պատրաստվու^մ ենք լավ վերապատրաստված պահակներ նշանակել յուրաքանչյուր դպրոցում:

Պատասխան - Մա դեռևս չի քննարկվել: Պետության օրենսդիր մարմինը քննարկում է դպրոցական ռեսուրսների սպաներին կամ զինված պահակներին բոլոր դպրոցներում տեղավորելու համար, սակայն նրանք դեռևս չեն քվեարկել այս օրինագծի համար որևէ ֆինանսավորում չի նախատեսվում դրա համար: AB 2067- օրենքը ներկայացվեց Համագումարի անդամ Գալլագերի կողմից քննարկելու համար:

Հարց - Ի[՞]նչ ծրագրեր են նախատեսում Գլենդելի ոստիկանությունը և Հրդեհային ստորաբաժանումները և GUSD-ն արտակարգ իրավիճակների ժամանակ, երբ բախվում են հատուկ ուսուցում ստացող աշակերտների կարիքներին անդրադառնալու համար: Արդյո՞ք առաջին արձագանքողները անցել են վերապատրաստվել են, թե ինչպես հասկանալ և ապահով կերպով օգնել հաշմանդամության այնպիսի տեսակներ ունեցող մարդկանց, ինչպիսիք են՝ աուտիզմը, դաուլինի ախտանիշը, մտավոր հետամնացությունը և խլությունը:

Պատասխան - Այո: Գլենդելի ոստիկանությունը, Քրեսենթա Վալեյի շերիֆները և հրդեհի բաժանմունքները վերապատրաստում են անցնում, որպեսզի անդրադառնան հատուկ կարիքներ ունեցող աշակերտներին և անձնակազմի անդամներին: Օրինակ, Գլենդելի ոստիկանները հատուկ վերապատրաստում են ստանում, երբ դեռ ակադեմիայում են սովորում, այնուհետև վերապատրաստում են անցնում ամեն երկու տարին մեկ, թե ինչպես պետք է աշխատել հատուկ կարիքներ ունեցող և մտահովոր խնդիրներ ունեցող անհատների հետ:

Հարց – Ի[՞]նչ տեսակի անվտանգության համակարգ մենք ունենք այս պահին:

Պատասխան – Բոլոր միջին և ավագ դպրոցները ունեն մի քանի անվտանգության աշխատողներ: Դրանից բացի, դպրոցի ռեսուրսների աշխատակիցներ են գտնվում Քրեսենթա Վալի ավագ դպրոցում, Գլենդել ավագ դպրոցում և Հուվեր ավագ դպրոցում: GUSD-ն համագործակցում է Գլենդելի քաղաքապետարանի և Գլենդելի ոստիկանության բաժանմունքի հետ, որպեսզի ռեսուրսների աշխատակից նշանակել Քլարք ավագ դպրոցում 2018/2019 ուսումնական տարվա համար:

Հարց – Ինչու[՞] անվտանգության պահակներին չեն վերապատրաստում հրաձգության ժամանակ արձագանքելու համար:

Պատասխանել – GUSD-ն համագործակցում է այն կազմակերպությունների հետ, որ անվտանգության պահակներ են տրամադրում և Գլենդելի ոստիկանության բաժանմունքի հետ, որպեսզի ստանան անհրաժեշտ վերապատրաստումը:

Հարց - Դուք ունե՞ք մեկ շերիֆ, որը պարբերաբար վերահսկում է CVHS-ի շենքը եւ շրջակա տարածքը: Ամեն առավոտ եւ կեսօրին եւ տանում եւ վերցնում եմ իմ երեխային Լա Քրասենթա տարրական դպրոցից: Դպրոցը գտնվում է La Crescenta-ի ամենախոշոր փողոցներից մեկում, որտեղ վարորդները անտեսում են արագության օրենքները եւ անցորդներին՝ գալով մայրուղու կամ CVHS-ի կողմից: Կան նոր եւ անհամբեր վարորդներ: Այս ժամերին պետք է լինի իրավապահ մարմինների մշտական ներկայություն, որպեսզի կարգավորեն վտանգը Լա Քրասենթա տարրական դպրոցում: Ինչպե՞ս եք ապահովում անվտանգությունը մեր երեխաների համար:

Պատասխան – Պատասխանում է Քրասենթա Վալեյ շերիֆի բաժնի կապիտան Քրիս Բլասենքը:

Աշակերտների անվտանգությունը միշտ էլ իրավապահների գերակա առաջնահերթություններից մեկն է: Մինչդեռ CVHS-ում եւ միջնակարգ դպրոցում նշանակված դպրոցի ռեսուրսների աշխատակցի վերաբերյալ հայտարարությունը ճիշտ է, նա պետք է իմանա, որ կան նաև մի քանի ուստիկաններ, ովքեր վերահսկում են շրջակայքը: Նրանց խրախուսում են շարունակաբար անցնել տարածքի դպրոցներով, որքանով որ ժամանակն է թույլ տալիս: Որոշ մարդկանց շփոթեցնում է այն փաստը, որ La Crescenta-ն իրականում չմիավորված համայնք է եւ ոչ թե պայմանագրային քաղաք: Սա է պատճառը, որ Կալիֆորնիայի Highway Patrol-ը պատասխանատու է ճանապարհային երթևեկության եւ տրանսպորտային միջոցների բախումների համար: Խնդրում եմ տեղեկացրեք ծնողին, որ ես այս մտահոգությունը կներառեմ ճեպագրույցում, որպեսզի տարածքի պատասխանատու ուստիկանները տեսանելի լինեն տարրական դպրոցի շուրջ: Ես նաև կխրախուսեմ նրան հայտնել, թե արդյոք կա կոնկրետ մի անձ, ով մշտապես խախտում է երթևեկության օրենքները: Մենք միշտ կարող ենք քննարկել այդ որոշ մտահոգությունները խախտում կատարած անձի հետ իրենց տանը՝ նույնիսկ, եթե նա ցանկանում է անանուն լինել: Երկրորդ, ես կանեմ հնարավորինս, որ Ալտադենայի CHP-ն տեղյակ լինի այս բողոքի մասին, որպեսզի նրանք կարողանան ուստիկան ունենալ այդ տարածքում՝ օրենքները կիրառելու համար: Լա Քրասենթայի մի քանի քաղաքային խորհրդի հանդիպումներին հաճախելուց հետո ես հասկացա, որ CHP-ն լավ ծանոթ է այդ տարածքին եւ բավականին կանոնավոր կերպով այցելում է դպրոցներ: Ծնողների/բնակիչների մեծ մասը գիտի CHP-ի փոխտնօրեն Քոփերին, ում հնարավոր է տեսնել բազմաթիվ դպրոցների շուրջ: Երրորդ, ես էլ կտեղեկացնեմ մեր բաժնի Patrol կամավորներին, որ նման խնդիր կա, որպեսզի նրանք նույնպես կարողանան աջակցել դպրոցին:

Հարց - Արդյոք Գլենդելը փնտրու՞մ է ցանկացած նոր տեխնոլոգիա, որը կաջակցի դպրոցի անվտանգությանը (դռներ, որոնք փակվում են ներսից, զրահապատ ապակի, պտտվող տեսախցիկներ և այլն):

Պատասխան - Այո: Աշխատակազմը ներկայումս ավարտում է յուրաքանչյուր դպրոցի շենքի անվտանգության գույքագրումը, որպեսզի որոշի կարիք ունեցող տարածքները և հավաքագրի լավագույն փորձը և օրինակները շրջակա դպրոցներից եւ մասնագիտացած ընկերություններից՝ դպրոցի անվտանգության համար: Բոլոր դպրոցներում արդեն տեղադրված են պտտվող տեսախցիկներ: Դասասենյակի դռները միշտ փակ կարող են լինել, սակայն հատուկ արգելապատնեշի միջոցով բաց մնան, որպեսզի արտակարգ իրավիճակներում դրանք արագ փակվեն եւ ապահով լինեն:

Հարց - Ես նոր դպրոց ընդունված 11-րդ դասարանցու GUSD-ի ծնող եմ: Ինձ հետաքրքիր է իմանալ, թե ինչու է այդքան հեշտ մուտք գործել Դեյլի ավագ դպրոցի շենքը: Ինչու՞ տեսախցիկով ինտերկոմ չի տեղադրվում, որպեսզի հնարավոր լինի տեսնել, թե ով է գտնվում մուտքի մոտ, ինչպես նաև մետաղ որոնող սարք: Այժմ այդ աշակերտներն եւ աշխատակիցները թիրախ են հանդիսանում:

Պատասխան – Աշխատակազմը համագործակցում է Դեյլի ավագ դպրոցի ղեկավարության հետ, որպեսզի տեղադրեն անվտանգ մուտքի սարքավորումներ այս ամռանը:

Հարց – Կարող է արդյոք կրթաշրջանը մետաղյա կտորով փակել դասասենյակի դռների վրայի ապակե մասը: Այն հնարավոր է հեշտությամբ կտորել, իսկ հանցագործը կարող է փորձել ներս մտնել բաց դռնից:

Պատասխան – Շենքերի հարցերով զբաղվող աշխատակիցները յուրաքանչյուր դպրոցի անվտանգության գույքագրում են անցկացնում՝ որոշելու համար, թե ինչ լրացուցիչ անվտանգության միջոցներ պետք է լինեն յուրաքանչյուր դպրոցի տարածքում: «Վազիր, թաքնվիր, կովիր» դասընթացը ներառում է ընթացակարգեր, որպեսզի փակեն դռների պատուհանները եւ կահույքի միջոցով պատնեշ ստեղծել, եթե հանցագործը փորձի ներս մտնել: Սա դանդաղեցնում է հանցագործի մուտքը, եւ շատ դեպքերում փորձում են անցնել «ավելի հեշտ» թիրախի: Այս պատուհանները հնարավորությունն են տալիս իրավիճակի առաջին պատասխանողներին, ինչպիսիք են օրինակ ոստիկանները, տեսնել, թե ինչ է կատարվում ներսում, այնուհետև իրենց ներկայացնում են ուսուցիչներին եւ աշակերտներին, այնպես որ դռների պատուհանները մշտապես փակելու ծրագիր չկա:

Հարց – Առաջարկ. ԴՊՐՈՑԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ քաժինը ավելացրեք GUSD-ի կայքում, որն իր մեջ կներառի անվտանգության վերաբերյալ տեղեկություններ (մտահոգություն հայտնելու գիծ, բամբասանքի հայտնում, Գլենդելի ոստիկանության հեռախոսահամարները և այլն): Ներկայումս, GUSD-ի կայքում դժվար է գտնել բոլոր անհրաժեշտ էջերը և դրանցից ոչ մեկը մյուսի հետ կապված չէ: Այս տեսակի տեղեկատվությունը պետք է հեշտ գտնվող տեղում լինի:

Պատասխան – Շնորհակալ ենք ձեր առաջարկի համար: Մենք կակտիվացնենք այդ քաժինը և հղումները GUSD-ի կայքում:

Հարց - Մասնավորապես միջնակարգ եւ ավագ դպրոցներում, որտեղ առկա են բազմաթիվ անթույլատրելի մուտքեր, ավելի մեծ անվտանգություն ապահովելու նպատակով, կրթաշրջանը կդիտարկի կարևոր քարտային համակարգի տեղադրումը, որպեսզի աշակերտները կարողանան սկանավորել աշակերտական ID քարտը՝ դպրոց մուտք գործելու համար:

Պատասխան - Բոլոր մուտքերում մետաղ որոնող սարքերի տեղադրման մասին մտահոգությունների նման, աշակերտների մուտքը դպրոցի ID քարտերով կարող է ավելի շատ անվտանգության խնդիրներ ստեղծել: Աշակերտները պետք է շարք կանգնած լինեն, որպեսզի առավոտյան կարողանան սքաների միջոց անցկացնել իրենց ID քարտերը՝ ստեղծելով ուսանողների մի շարք, որոնց հնարավոր է վիրավորել: Ուսանողները կարող են կորցնել կամ տալ իրենց հիմնական քարտը մեկ այլ անձի՝ թույլ տալով առանց թույլտվության որևէ մեկին դպրոց մուտք գործել: Ի վերջո, սա չի խանգարի կրակող կատարողներին, ովքեր այդ դպրոցի աշակերտներ են, քանի որ նրանք կունենան հիմնական քարտ՝ դպրոց մուտք գործելու համար:

Հարց – Ինչու՞ միայն մեկ անունուն բողոք հայտնելու գիծ կա Գլենդելի հանրային դպրոցի համար, իսկ մյուս դպրոցների համար ոչինչ չկա: Ոչ բոլորն են, որ ունեն և կարող են օգտագործել GUSD-ի ծրագիրը: Կարո՞ղ է արդյոք կրթաշրջանը մեկ ընդհանուր հեռախոսահամար ունենալ բոլոր դպրոցների համար:

Պատասխան – Շնորհակալ ենք ձեր առաջարկի համար: Մենք կաշխատենք մեր հեռախոսակապի ընկերության հետ, որպեսզի մեկ հեռախոսահամար հասկացնենք կրթաշրջանի բողոքների համար:

Հարց – Ի՞նչ դիրքորոշում ունի GUSD-ն մետաղ որոնող սարքավորումներ տեղադրելու համար դպրոցի մուտքերում, հատկապես՝ միջին և ավագ դպրոցներում:

Պատասխան - GUSD-ն կապահովի փակ դարպասներ բոլոր դպրոցների համար և վերահսկողության, երբ ուսանողները մտնում եւ դուրս են գալիս դպրոցից: Դպրոցի մուտքերում մետաղ որոնող սարքեր տեղադրելու ծրագիր չկա: Սա աշակերտների եւ աշխատակիցների համար խոչընդոտ կստեղծի եւ հնարավորություն ստեղծի այն մարդկանց համար, ովքեր ցանկանում են վնաս հասցնել մեծ թվով աշակերտներին, որոնք սպասում են ամեն առավոտ այդ սարքի միջով անցնելու համար, ինչպես այն հրաձգությունը, որ տեղի ունեցավ 2013թ. Լոս Անջելեսի օդանավակայանում, TSA անցակետում եւ ստուգման տարածքում: GUSD-ն ունի սարքավորում, որն իրականացնում է մետաղ հայտնաբերող պատյաններ՝ պատահական որոնումներ կատարելու համար: Իսկ պատահական որոնումները կատարվում են համապատասխանաբար միջին եւ ավագ դպրոցներում:

Հարց – Տրամադրելու՞ էք արդյոք ուսուցիչներին գրահապատ բաճկոններ:

Պատասխան – Ոչ:

Հարց – Անվտանգության ծրագրերի ի՞նչ տեսակներն են կիրառվում այն երեխաների համար, ովքեր մասնակցում են դպրոցի հետո առկա ծրագրերին: Այս ծրագրերից որոշները աշխատում են մինչեւ ժամը 18: 00-ը, իսկ գրասենյակի անձնակազմը և ղեկավարները տեղում չեն: Այդ ժամերին ուսուցիչներին եւ ուսուցանող անձնակազմի օգնության համար ի՞նչ տեսակի աջակցություն կա:

Պատասխան - Այս ծրագրերը բաց են առավոտյան ժամը 6: 30-ից մինչեւ 17: 30-ը կամ 18: 00-ը՝ կախված դպրոցից: Տարրական եւ միջին դպրոցներում վաղ շրջանի կրթության եւ արտաժամյա ուսումնական բոլոր ծրագրերը (EEELP) ունեն անվտանգության ծրագրեր և աշխատակազմը վերապատրաստվում է արտակարգ իրավիճակներում արձագանքելու համար: Այս ուսուցումը եւ աջակցությունը տրամադրվում է EEELP-ի վերահսկողների եւ ուսուցիչների կողմից, ովքեր նշանակված են յուրաքանչյուր դպրոցում եւ աշխատակազմը սերտորեն համագործակցում է դպրոցի տնօրենների, գրասենյակի անձնակազմի եւ աջակցող աշխատակիցների հետ՝ ապահովելով դպրոցի անվտանգությունը, բոլոր ժամերի ընթացքում:

Հարց - Որքա՞ն հաճախ է դպրոցը վերանայում կամ թարմացնում արտակարգ իրավիճակների ընթացակարգերի օրինակ, Վերդուգո Վուդլանդս տարրական դպրոցի շենքը ենթարկվեց մեծ փոփոխությունների, ավելացվեց նոր մասնաշենք և այլն: Կոնկրետ այս դպրոցը պարսպապատ չէ հիմնական շենքի ճակատում, եթե դա իրականացվի, ապա երեխաները ապահով կլինեն և հեռու կլինեն հանցագործներից:

Պատասխան - Դպրոցի նախագծերը նախապես թարմացվել և ներկայացվել են կրթաշրջանի և իրավապահ մարմինների վերանայման համար յուրաքանչյուր տարի՝ ոչ ուշ, քան մարտի 1-ը: Երբ դպրոցները շինարարության մեջ են լինում, նոր շենքեր են ավելացվում կամ հին շենքերն են հեռացվում, անվտանգության ծրագիրը շարունակաբար վերանայվում է և փոփոխվում է՝ արտացոլելու դպրոցի ներկայիս աշխարհագրությունը: Դպրոցների շենքերի հարցերով զբաղվող աշխատակիցները կատարում են յուրաքանչյուր դպրոցի անվտանգության գույքագրումը՝ որոշելու համար, թե ինչ լրացուցիչ անվտանգության միջոցներ պետք է տեղադրվեն յուրաքանչյուր դպրոցի շենքում:

Հարց – Ի՞նչ է արվում, որպեսզի հնարավոր լինի ճանաչել/արձանագրել/վերահսկել/խորհրդատվություն տրամադրել անհանգստություն ունեցող աշակերտներին:

Պատասխան – Հնարավոր անհանգիստ կամ դժվարություններ ունեցող աշակերտների վաղ հայտնաբերումը կարևոր է: GUSD-ը խնդրում է աշակերտներին և ծնողներին, եթե դուք «տեսնեք մի բան, ասեք այս մասին», որպեսզի անձնակազմը կարողանա ուսումնասիրել և միջամտել և արագ աջակցություն ցուցաբերել: Բոլոր միջին դպրոցի ուսուցիչները վերապատրաստվել են, որպեսզի նախապես ճանաչեն այն աշակերտներին, ովքեր իրենք իրենց վնաս պատճառելու վարքագիծ են դրսևորում, ներառյալ այն վարքագիծը, որը կարող է վնասակար լինել ուրիշների համար: Աշակերտները, ովքեր դժվարություններ ունեն խտրական, ագրեսիվ կամ վնասակար վարքագծի հետ, նրանց հետ պետք է անհատապես աշխատել՝ որոշելու, թե ինչ տեսակի աջակցությունը է միջամտությունը կհանգեցնի դրական փոփոխության: Որոշ վարքագծեր պայմանավորված են աշակերտի կյանքի ընթացքում բնապահականակն սթրեսների պատճառով և դրա համար կարող է տրամադրվել կարճաժամկետ խորհրդատվություն և վերահսկողություն: Այլ վարքագծերը կարող են կապված լինել հաշմանդամության հետ և ավելի շատ համակարգված մոտեցում պետք է ունենա: Կարևոր է, որ բոլոր աշակերտները զարգացնեն սոցիալ-հուզական հմտություններ, այդ թվում, ներողամտություն ուրիշների նկատմամբ, երբ աշակերտը դժբարություններ ունենա, նա պետք է կարողանա գտնել վստահելի չափահասի՝ այդ աշակերտի անունից, որպեսզի օգնի նրան:

Հարց - Երբ դպրոցը հանդուրժողականություն չի ցուցաբերում ահաբեկման (bullying) առնչությամբ, դպրոցի ղեկավարները չեն անվանում դա «վարքային հարցերը» և անդրադառնում են դրանց այնպես, ինչպես իրականությունն է, երբ սպառվում են դպրոցի տրամադրված բոլոր ռեսուրսները: Արդեն մեկ տարուց ավել է դպրոցը հրաժարվում է անվանել այն ահաբեկում: Այո, մեր երեխաները օգնության կարիք ունեն, բայց երեխաները, ովքեր ահաբեկման են ենթարկվում, պետք է հստակ տեսնեն այդ ամենի հետևանքները, որպեսզի իրենց ապահով և լաված զգան:

Պատասխան - Մեծ շփոթություն կա այն վերաբերյալ, թե որ վարքն է համարվում ահաբեկում: GUSD-ի աշխատակիցները աշխատում են հետազոտության վրա հիմնված աղյուսակով, որպեսզի գնահատեն աշակերտի վարքագիծը՝ պարզելու, թե արդյոք դրանք մեկուսացված աշակերտական փաստարկներ են, թե ընդհարում կամ եթե վարվելակերպը կրկնվում է, ապա ուժի վրա է հիմնված և նախատեսված է այլ աշակերտին վնաս հասցնելու և արհամարհելու համար: Bullying-ը դարձել է լայնածավալ բառակապակցություն, որը ներառում է աշակերտական ընդհարումների բոլոր միջադեպերը, այլ ոչ թե անդրադառնալով այն դեպքերին, որ համապատասխանում են հետազոտությանը: Հատուկ կարիքներ ունեցող աշակերտների կարգապահությունը և նրանց

աջակցությունն ու ծառայությունները գաղտնի են: Սա կարող է վրդովմունք առաջացնել այն աշակերտների ծնողների մոտ, ում վնաս է հասցրել մեկ այլ աշակերտ և դպրոցի ղեկավարը չի կարող այդ դեպքի հետ կապված մանրամասները ներկայացնի, թե ինչպես է արձագանքել է մյուս աշակերտը և նրա ընտանիքի: Կարևորն այն է, որ աշակերտները զգան, որ իրենց լսում են, երբ տեղի են ունենում միջադեպեր, որոնք նրանց համար վտանգ են ներկայացնում դպրոցում: Աշակերտներին խրախուսում են դիմել իրենց ուսուցիչներին կամ դպրոցի ղեկավարներին, երբ նման դեպքեր են տեղի ունենում, իսկ ծնողներին խրախուսում են կապ հաստատել ուսուցիչների և ղեկավարների հետ, երբ երեխան այս տեսակի տեղեկատվություն է ներկայացնում տանը: Եթե ծնողը չի հասկանում, թե տվյալ իրավիճակում դպրոցի աշխատակիցը ինչու է արձագանքել կոնկրետ ձևով, ապա նրանք կարող են դիմել դոկտոր Ռենե Վալդեսին՝ աշակերտների աջակցության ծառայությունների գրասենյակին, ով կարող է վերանայել միջադեպերը եւ արձագանքել դրանց: Նրա կարող էք կապվել 818-241-3111-ին, ներքին 1285 հեռախոսահամարով կամ rvaldes@gusd.net հասցեով: Կարևոր է նշել, սակայն, որ դոկտոր Վալդեսը չի կարող ներկայացնել աշակերտների վերաբերյալ գաղտնի տեղեկատվությունը, սակայն միջադեպին ծանոթանալուց հետո, կարող է հավաստիացնել ծնողին, եթե դպրոցի թիմը հետևում է աջակցության բոլոր կողմերին:

Հարց – Բարև: Ես հասկանում եմ, որ կրթաշրջանը նախատեսում է դպրոցի խորհրդատուների համար պաշտոններ բացելը, որպեսզի կարողանա ավելի շատ աջակցություն ցուցաբերել այն աշակերտներին, ովքեր դժվարություններ ունեն զգացական և հոգեբանական ոլորտներում: Ես կցանկանայի ավելի շատ տեղեկություններ ստանալ այդ մասին, քանի որ ես ապրում եմ Գլենդելի համայնքում, իմ դուստրը GUSD-ի աշակերտ է, եւ ես հոգեթերապևտ եմ: Կարո՞ղ եք արդյոք տեղեկություն տրամադրել ինձ GUSD-ում նոր բացվող խորհրդատուների, հոգեկան առողջության արտոնագրված մասնագետների աշխատատեղերի վերաբերյալ: Շնորհակալություն:

Պատասխան – Շնորհակալություն ձեր կողմից ցուցաբերված հետաքրքրության համար: Թափուր պաշտոնների մասին տեղեկությունները հասանելի են GUSD-ի Human Resources բաժնի էջում՝ www.gusd.net/domain/50

Հարց – Եթե աշակերտը շարունակաբար (ամիսներ շարունակ) անհանգստացնող վարքագիծ է ցուցաբերում, երբ է առաջանում նրան դասարանից հանելու և մեկ այլ միջավայրում ուսուցանելու կարիքը: Շարունակական վատ վարքագիծը կարող է վնասել նրա շրջապատի երեխաներին և կարող է հանգեցնել աշակերտների կողմից ահաբեկման, ովքեր պատասխանում են նման վարքագծով:

Պատասխան – Կարիքներն ու վարքագծերը տարբեր են աշակերտից աշակերտ: Աշակերտները, ովքեր խաթարող, ագրեսիվ և վտանգավոր վարքագիծ են ցուցաբերում, նրանց հետ անհատապես են աշխատում, որպեսզի որոշվի, թե ինչ տեսակի աջակցություն և միջամտությունները կարող են դրական փոփոխության հանգեցնել: Որոշ վարքագծեր պայմանավորված են աշակերտի կյանքի ընթացքում նրա ունեցած բնապահպանական սթրեսների պատճառով և կարճաժամկետ խորհրդատվություն կարելի է տրամադրել: Այլ վարքագծերը կարող են կապված լինել անկարողության հետ, և այդ երեխային պետք է ավելի կենտրոնացված թիմային մոտեցում կամ ավելի սահմանափակ ուսուցում կազմակերպել նրա համար: GUSD-ն ունի վարվելակերպի աջակցման անձնակազմ, որ կարող է օգնել ուսուցիչներին, ղեկավարներին եւ դպրոցի

անձնակազմին, որպեսզի աշխատեն եւ միջամտեն աշակերտների այն վարքագծի ուղղությամբ, որոնք վնասակար կամ անհարգալից են այլ աշակերտների համար: Այդ դեպքերում վարքագծի աշակցության ծրագրեր են կազմվում, իսկ դպրոցի աշխատակիցները հանդիպում են ծնողների հետ՝ որոշելու գործողությունների համապատասխան ընթացքը: Կարևոր է, որ բոլոր աշակերտները զարգացնեն սոցիալ-հուզական հմտություններ, այդ թվում՝ կարեկցանքը մյուսների հանդեպ, երբ աշակերտը դժվարություններ ունի և չի պատասխանում այն աշակերտին, ով միգուցե որոշ դեպքերում չի կարողանում կառավարել իր գործողությունները:

Հարց – Արդյոք ամեն դասարանի մակարդակին համապատասխան հրաձգային/դպրոցի lockdown-ի վերապատրաստման դասընթացներ տրամադրվում են աշակերտներին: Ես հասկանում եմ, որ Գլենդելի ոսիտիկանությունը այդ վերապատրաստումը տրամադրում է իր աշխատակիցների համար: Ես շատ կցանկանայի, որ դա նաև դպրոցում տեղի ունենար՝ մարդկային զարգացման և ճգնաժամի հարցերով զբաղվող խորհրդատուների օգնությամբ:

Պատասխան - Դպրոցները ներգրավում են աշակերտներին մի շարք անվտանգության նախավարժանքների, որոնք ներառում են ավանդական հրդեհի, երկրաշարժի վարժանքները և lockdown/ապաստանի վարժանքները: Կարևոր է աշակերտներին այնպես վերապատրաստել, ինչը համապատասխան կլինի նրանց զարգացմանը՝ տեղեկատվություն տրամադրելու համար: Սակայն այս ամենը չի կարող վախ և զգացմունքային անհանգստություն առաջացնել դպրոցի վերաբերյալ: Միջին և ավագ դպրոցները մասնակցել են ակտիվ անհանգստացնողի և ակտիվ հրաձգային վարժանքներին դասերի ժամերի ընթացքում, սակայն տարրական դպրոցները կենտրոնանում են աշակերտների վերապատրաստման վրա, որպեսզի նրանք ցանկացած իրավիճակներում ճիշտ հետևեն մեծահասակների ցուցումներին:

Հարց – Ինչպե՞ս էք նախապատրաստում աշակերտներին ցանկացած հնարավոր հրաձգային իրավիճակների համար:

Պատասխան - Դպրոցները ներգրավում են աշակերտներին մի շարք անվտանգության նախավարժանքների, որոնք ներառում են ավանդական հրդեհի, երկրաշարժի վարժանքները և lockdown/ապաստանի վարժանքները: Կարևոր է աշակերտներին այնպես վերապատրաստել, ինչը համապատասխան կլինի նրանց զարգացմանը՝ տեղեկատվություն տրամադրելու համար: Սակայն այս ամենը չի կարող վախ և զգացմունքային անհանգստություն առաջացնել դպրոցի վերաբերյալ: Միջին և ավագ դպրոցները մասնակցել են ակտիվ անհանգստացնողի և ակտիվ հրաձգային վարժանքներին դասերի ժամերի ընթացքում, սակայն տարրական դպրոցները կենտրոնանում են աշակերտների վերապատրաստման վրա, որպեսզի նրանք ցանկացած իրավիճակներում ճիշտ հետևեն մեծահասակների ցուցումներին:

Հարց – Ինչպե՞ս էք պաշտպանում հատուկ ուսուցում ստացող աշակերտներին:

Պատասխան - Մա անվտանգության ընթացակարգերի կիրառման համաձուլում է այն աշակերտների համար, ովքեր հատուկ կարիքներ ունեն՝ համագործակցելով դեպքերին առաջին արձագանքողների հետ, ովքեր հատուկ վերապատրաստվել են հատուկ կարիքներ ունեցող մարդկանց հետ աշխատելու համար, ինչպես նաև լրացուցիչ անվտանգության միջոցներ են տրամադրում այն դասարաններին, որտեղ կան աշակերտներ, ովքեր հնարավոր է չկարողանան հանգիստ մնալ արտակարգ իրավիճակներում: Հատուկ կարիքներով աշակերտների համար

նախատեսված դասասենյակները հստակորեն նշված են դպրոցական քարտեզների վրա՝ առաջին արձագանքողների համար, որպեսզի նրանք ավելի մասնագիտացված խնամք ցուցաբերեն այդ խմբի աշակերտներին:

Հարց – Աշակերտներին ուղեկցել են մարզադահլիճ՝ ՔԱՅԼԱՐՇԱՎԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ փոխարեն:

Պատասխան – 2018թ. մարտի 14-ի աշակերտների պետական քայլարշավը նախատեսված էր միայն տեղ 17 բոլոր, առավոտյան 10:00-10:17-ը՝ անկախ ժամային գոտուց: Սա համեմատաբար կարճ ժամանակահատված է Ֆլորիդա նահանգի Փարքլանդ քաղաքի դպրոցում տեղի ունեցած 17 գոհերին հիշատակելու համար: Դրանից հետո աշակերտները անմիջապես դասարաններ վերադարձան: Այն աշակերտներին, ովքեր կցանկանան մնալ դպրոցի տարածքում և ներգրավվել քաղաքացիական քննարկումներին, դպրոցը անվտանգ միջավայր է տրամադրում: Սա նվազեցրել է այն աշակերտների ուսումնական ծրագրերի խաթարումը, ովքեր չեն ցանկացել մասնակցել և չեն խրախուսել հակացուցարարներին դպրոցից դուրս: